

## Գոնկրեդը Հաստատեց Տնտեսութեան Աջակցութեան Օրինագիծը Ամերիկացիներու Մեծ Մասը Պիտի Ստանան 1200 Տոլար Նպաստ

Ուրբաթ օր, Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տունը հաստատեց տնտեսութեան աջակցութեան օրինագիծը, որ օր մը առաջ միաձայնութեամբ քուէարկուած էր Ծերակոյտին կողմէ: «Քորոնա» ժահրի համաճարակին պատճառաւ ստեղծուած տնտեսական տագնակը կանխելու նպատակաւ, երկու դրիլիոն տոլարի աջակցութիւն պիտի տրամադրուի տնտեսութեան բազմաթիւ ճիւղերուն ու նաեւ անհատ քաղաքացիներուն:

Գոնկրեդի օրինագիծին համաձայն յառաջիկայ շաբաթներուն 1200 տոլար անմիջական օգնութիւն պիտի ուղարկուի բոլոր այն ամերիկացիներուն, որոնց տարեկան եկամուտը մինչեւ 75 հազար տոլար է: 75-99 հազար տոլար եկամուտ ունեցողները կը ստանան աւելի նուազ գումար: Ընտանիքները պիտի ստանան 2400 տոլար, իսկ իւրաքանչիւր երեխայի համար՝ յաւելեալ 500 տոլար: 99 հազար տոլարէն աւելի եկամուտ ունեցողներուն բաժին պիտի չհասնի այն նպաստներէն:

Գործազրկութեան մատնուած անհատներու նպաստները պիտի երկարաձգուի չորս ամիսով ու նաեւ պիտի ստանան շաբաթական յաւելեալ 600 տոլար:

1200 տոլար օժանդակութիւնը պիտի տրուի նաեւ ընկերային տարբեր տեսակի նպաստներ՝ Social Security եւ SSI ստացողներուն:

Այս նպաստէն պիտի կրնան օգտուիլ նաեւ այն Ամերիկացիները, որոնք կը բնակին արտասահմանի մէջ: Հետեւաբար, Հայաստան բնակող Ամերիկայի քաղաքացիները (ոչ կրին քարտ ունեցողներ), որոնք 2018-ին եւ կամ 2019-ի հարկային փաստաթուղթեր (tax return) լրացուցած են պիտի կրնան օգտուիլ այս նպաստներէն:

Այս օրինագիծով գործազրկութեան նպաստ պիտի տրամադրուի նաեւ անոնց, որոնք կը գործէին ազատ պայմանագրով (Independent Contractor) եւ կը ստանային 1099 հարկային փաստաթուղթեր: Անցեալին, այս դասակարգման մէջ գտնուողները իրաւունք չունէին գործազրկութեան նպաստի դիմելու: Այս փոփոխութիւնը առիթ կու տայ Uber-ի եւ Lyft-ի վարորդներուն եւ այլ նման աշխատանքներով զբաղողներուն, օգտուելու պետական նպաստներէն:

Յայտնենք որ, Մարտ ամսուայ առաջին երեք շաբաթներուն միայն, մօտ 4 միլիոն ամերիկացիներ դիմում ներկայացուցած են

Շար.ը էջ 5

## Արայիկ Յարութիւնեան եւ Մասիս Մայիլեան Պիտի Մասնակցին Արցախի Նախագահի Ընտրութիւններու Երկրորդ Փուլին



Արայիկ Յարութիւնեան

Արցախի Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովը հրապարակեց Մարտ 31-ին կայացած նախագահական ընտրութեան արդիւնքները, որու համաձայն թեկնածուներէն ոչ մէկը կարողացած է հաւքել ձայներու 50 տոկոսէն աւելին: Հետեւաբար, Ապրիլ 14-ին տեղի կ'ունենայ նախագահի ընտրութեան երկրորդ փուլը:

Արցախի նախագահի պաշտօնին յաւակնող 14 թեկնածուներուն մէջ ամենէն աւելի քուէ ստացած է



Մասիս Մայիլեան

նախկին վարչապետ Արայիկ Յարութիւնեանը՝ 36,076 ձայն կամ 49,26 տոկոս: Երկրորդ տեղի վրայ կու գայ արտաքին գործոց նախարար Մասիս Մայիլեանը, որ ստացած է 19,360 ձայն կամ 26,4 տոկոս: Թեկնածուներէն Վիտալի Բալասանեան հաւքած է 10,755 ձայն կամ 14,7 տոկոս:

Ընտրողներու ընդհանուր թիւը կազմած է 104,348, իսկ

Շար.ը էջ 5

## Հայաստան Մէջ Առնուագն Տասը Օրով Կ'երկարաձգուի Սահմանափակումները

Կառավարութիւնը եւս տասը օրով կ'երկարաձգէ սահմանափակումները: Պատճառը, ինչպէս ֆէյսպուքեան ուղիղ եթերով յայտարարեց Նիկոլ Փաշինեան, երկրին մէջ «Քորոնա» ժահրի հաստատուած դէպքերուն աճն է:

Վարչապետը քաղաքացիներուն կողմէն ուղղեց շատ լուրջ վերաբերուիլ իրավիճակին. - «Եթէ մենք այս իրավիճակում արտակարգ միջոցներ չձեռնարկենք, «Քորոնա» ժահրը կը հասնի մեզ շատ արագ»:

Փաշինեան շեշտեց, որ սահմանափակումները ոչ թէ քաղաքական նպատակներով կը կատարուին, այլ իրավիճակը կառավարելի պահելու, քաղաքացիներու անվտանգութիւնը ապահովելու համար:

Ան անդրադարձաւ նաեւ «Քորոնա» ժահրով հիւանդացած անձերու առողջութեան, ըսելով, մասնաւորապէս, որ անոնց մեծամասնութիւնը նոյնիսկ ջերմութիւն չունի. - «Շուրջ 90 անձ թոքաբորբ ունի, եւ այս պահին թոքաբորբով հիւանդ մեր քաղաքացիներէն 30-ը գտնուում են ծանր վիճակում»:

Պարէտ Տիրգրան Աւինեան կառավարութեան ասուլիսի ընթացքին յայտարարեց, որ սահմանափակումները աւելի պիտի խստանան: Ըստ Աւինեանի, եթէ կառավարութիւնը որեւէ սահմանափակում չմտցնէր, Մարտի 1-էն յետոյ,

75-80 օրուայ ընթացքին Հայաստանի բնակչութեան մօտ 89 տոկոսը վարակուած կ'ըլլար:

Աւինեան նաեւ շեշտեց, որ կառավարութեան բոլոր գործողութիւնները գիտական հիմք ունին:

Հարցին, թէ ե՞րբ Հայաստանը կը վերադառնայ բնականոն կեանքին, պարէտը պատասխանեց. - «Փուլ առ փուլ հանելով բոլոր սահմանափակումները՝ մենք յոյս ունենք, որ արդէն Ապրիլի կէսերից - Մայիսի սկզբից մենք ամբողջապէս վերադառնալու ենք մեր բնականոն կեանքին՝ եթէ շղթաների կանխարգելման եւ անձանց մեկուսացման աշխատանքները կարողանանք իտէյալական իրականացնել»:

Առողջապահութեան նախարարութեան մամուլի իսուսակ Ալինա Նիկողոսեան ֆէյսպուքին մէջ նշած է, որ հաստատուած նոր վարակակիրներէն 23-ը գտնուած են մեկուսացման մէջ, 24-ը կապ ունին հաստատուած դէպքերուն հետ, 3 անձերու շփման շրջանակը կը պարզուի:

Այսպիսով Հայաստան հաստատուած դէպքերը հասան 532-ի, որոնցմէ բուժուած է 30-ը, մահացած՝ 3-ը:

Առողջապահութեան նախարարութեան

Շար.ը էջ 5

## ՍԳՅԿ-ի Նախաձեռնութեամբ Ստեղծուած է Խորհրդատուական Գրասենեակ

ՍԳՅԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի նախաձեռնութեամբ ու համագործակցութեամբ Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան (ՀԿԲՄ) եւ Հայ Ամերիկեան Խորհուրդի (ՀԱԽ) կը յայտարարէ որ «քորոնա» ժահրի ստեղծած տագնապալի վիճակին բերումով կեանքի կոչած ենք յատուկ գրասենեակ մը:

Սոյն գրասենեակը խորհրդատուական ծառայութիւններ պիտի տրամադրէ պետական եւ այլ նպաստներէն օգտուելու կարելիութիւններուն մասին, որպէսզի Հայ քաղաքացիները կարողանան որոշ չափով յաղթահարել տնտեսական դժուարութիւնները:

Խորհրդատուութեան եւ օժանդակութեան համար կարելի է դիմել հեռաձայնելով հետեւեալ թիւին. 888-908-1887

Կամ. contactus@aebu.org

Այս առթիւ կոչ կ'ուղղենք հետեւի շրջանի առողջապահական կանոններուն եւ ապահովական բոլոր թելադրանքներուն:

ՍԳՅԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին

## Երոպական Միութիւնը 140 Միլիոն Եւրօ կը Տրամադրէ

Եւրոպական Միութիւնը «Արեւելեան գործընկերութեան» ծրագրի մասնակից վեց պետութիւններուն, որոնց կարգին՝ Հայաստանին, ընդհանուր առմամբ շուրջ 140 միլիոն եւրօ կը տրամադրէ «Քորոնա» ժահրի համաճարակի յղթահարման վերաբերեալ անյապաղ կարիքները հոգալու նպատակով: Այս մասին նշուած է Եւրոպական յանձնաժողովի կայքը տեղադրուած հարցազրույթի մէջ:

Ըստ նոյն աղբիւրին, «Արեւելեան գործընկերութեան» երկիրներուն Եւրոպական Միութիւնը մօտ 700 միլիոն եւրօ կը տրամադրէ ճգնաժամի ընկերա-տնտեսական հետեւանքները մեղմացնելու նպատակով: Այդ, ըստ Եւրոպական յանձնաժողովի ներկայացուցիչներուն, կը կատարուի գործընկեր պետութիւններուն ցուցաբերուող օգնութեան, ներկայիս առկայ գործելակերպի կիրառմամբ:

Եւրոպական Միութեան հարեւանութեան քաղաքականութեան եւ ընդարձակման հարցերով յանձնակատար Օլիվըր Վարիլիի համաձայն՝ ցուցաբերուող օգնութիւնը կ'ուղղուի առողջապահական ոլորտ, ինչպէս նաեւ միջին եւ մանր ձեռնարկատիրութեան աջակցութեան:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Քաղաքականութիւնը Փորձութեան Ժամին

ԱՐՄԵՆ ՕՐԱՆԵԱՆ

Հայաստանն ուշագրաւ օրեր է ապրում:

Վերջին դիմակներն են պատու-ւում: Ո՛չ բժշկական: Թէեւ ոմանց պարագայում դիմակներն այնքան թափանցիկ էին, որ հանրութիւնը վաղուց էր տեսել եւ գիտէր, թէ դրանց տակ ինչ կայ իրականում: Բայց դէ՛ դա ոմանց չէր խանգարել դիմակ հագնել եւ փարիսեցիութեան, երեսպաշտութեան քօղի տակ հանդէս գալ՝ յոյսը դնելով հանրա-յին ամենգիտի վրայ: Ու դէ, բնականաբար՝ արտակարգ իրա-վիճակների վրայ:

Հայաստանում (ինչպէս եւ աշ-խարհում) բարդ օրեր են, որտեղ ցանկացած բանական մարդ հաս-կանում է, որ իր անելիքը երկու բան պէտք է լինի. կա՛մ օգնել, կա՛մ եթէ չես կարողանում/չես ցանկա-նում դա անել, գոնէ չվնասել: Առժամանակ դադար տալ քաղա-քական նկատառումներով «բզբզե-լը», մինչեւ կը գան աւելի լաւ ժամանակներ: Որովհետեւ այս բարդ շրջանում գերակայող պե-տութեան՝ որպէս ամբողջականու-թիւն, շահն է, ոչ թէ առանձին անձի կամ խմբի: Որովհետեւ բա-նական մարդը հասկանում եւ ցան-կանում է, որ իշխանութիւնը (ո՛վ էլ որ լինի իշխանութեան ղեկին) բարդ իրավիճակը յաղթահարի, յաՉողի, չտապալի, քանի որ նրա տապալումը նշանակելու է երկրի տապալում:

Բայց դէ՛ յայտնի խօսք կայ. գէլի գլխին աւետարան են կար-դում, ասում է՝ շուտ արա, ոչխարը սարովն անցաւ:

Սերժ Սարգսեանն, օրինակ, յայտարարութիւն է տարածում, ըստ որի՝ պէտք է ազգովի հա-մախմբուել, որ յաղթահարուի այս վիճակը: Լաւ բան է ասում, ու լաւ է, որ ասում է: Միայն թէ հասկա-նալի չէ, թէ այդ դէպքում ինչու իր կողին չեն հետեւում իր իսկ ղեկա-վարած կուսակցութեան «կարկա-ռունները», կամ, առաջին հերթին սեփական փեսան՝ Վատիկանում Հայաստանի նախկին ղեսպան Մի-քայէլ Մինասեանը, որ Սարգսեա-նի կոչից ժամեր առաջ հեռուից հեռու հերթական գրառումն էր արել, որն իր բովանդակութեամբ ոչ մի կերպ չի տեղադրում Սարգսեանի կոչի շրջանակներում:

Բարդ վիճակ է. պետութիւնը քաղաքացիներին կոչ է անում տանը մնալ, յատկապէս խոցելի խմբերի ներկայացուցիչներին:

Բայց նրանցից շատերն աշխատող մարդիկ են ու, տանը մնալով, հարցնում են, թէ բա ինչ է լինելու իրենց աշխատանքի ու աշխատա-վարձի հետ: Եւ հէնց այդ նեղ պահին յայտնում է ԲՀԿ ղեկավարն ու մոռնաթ գալիս՝ «ես ինչի պիտի վճարեմ» աշխատակիցնե-րին, եթէ նրանք աշխատանքի չեն գալիս, ով արտակարգ դրութիւն յայտարարել է, թող նա էլ նրանց մասին մտածի:

Լաւ պահ է, ի հարկէ, օգտուել եւ քաղաքական շահարկումներ անել, անկատար օրէնսդրական բազան հաշուի առնելով՝ մարդ-կանց ուղարկել կառավարութեան դռները: Ինչ է եղել, որ, ամէն ինչ մի կողմ, փոխարէնը բողոքաւոր-ների մեծ բանակ կ'առաջանայ: Ու չի մոռանում իշեցնել, որ ինքը դեռ շաբաթներ առաջ ասել է, թէ ինչ է պէտք անել, բայց դէ՛ ասողին լսող էր պէտք, ա՛յ չեն լսել իրեն, թող հիմա ինչպէս ուզում են՝ հարցի տակից դուրս գան: Դեռ մի կողմ թողնենք, որ անիրատեսական բաներ էր ասում: Ենթադրենք, ասածները հիմնաւոր էին, բո-լորը: Ենթադրենք՝ իր «խելացի» խորհուրդները չեն լսել, իսկապէս սխալուել են: Յետո՞՞: Նշանակում է՝ պէտք է հիմա մոռնաթ գալ ու յոխորտա՞լ՝ «բայ որ ասում էի...»:

Դէ, էն միւս խմբի մասին շատ է խօսուել. քոչարեանական պրոպագանդայի «մահապարտ» ակտիւստները, որ ամենառա-ջին շարքերում են եւ հատել են ոչ միայն քաղաքականութեան, այլեւ՝ բարոյականութեան բոլոր սահման-ները եւ կոչ են անում չօգնել իշխանութեանը, որովհետեւ վեր-ջինն ապերախտ է: Չենք խօսում նաեւ նրանց միացած մի քանի բժշկի մասին, որ կարծես մոռացել են, թէ ժամանակին ինչ հիպոկ-րատեան երդում են տուել, մոռա-ցել են ամենակարեւորը՝ ակտի-վիստ լինելուց առաջ իրենք բժիշկ են: Կամ՝ գոնէ բժշկական կրթու-թիւն են ստացել:

Բայց լաւ բաներ էլ կան: Նախ-կին իշխանութեան հետ փոխկա-պակցուած անձանցից բոլորը չէ, որ մոռանում, որ իրենք նախեւառաջ բժիշկ են: Օրինակ՝ Արա Բաբլոյեա-նը. այս թեմայի մասին նա խօսում է ո՛չ որպէս ՀՀԿ-ական նախկին պատգամաւոր, այդ թիմի անդամ, այդ թիմի կողմից առաջադրուած ու ընտրուած Աժ նախագահ:

Ուրեմն, ամէն դէպքում «էս կողմերում» ամէն ինչ կորած չէ: «Ի ԼՈՒՐ»

Ալիեւը Կորցրել Է Իշխանութիւնը. Բարուի Նոր Տեղը

ՅԱԿՈՒ ԲԱՊԱԼԵԱՆ

Ադրբեջանը կամ չի վերահս-կում իր բանակը, կամ միտումնա-ւոր սրում է իրադրութիւնը՝ կրե-լով հետեւանքի համար ամբողջ պատասխանատուութիւնը: Այդ յայ-տարարութիւնն արել է Հայաստա-նի արտաքին գործերի նախարա-րութիւնը, դատապարտելով մար-տի 30-ին Տաւուշի սահմանի ուղ-ղութեամբ ադրբեջանական դի-վերսիայի փորձը: Հայաստանի պաշտպանութեան նախարարու-թիւնը յայտնել է դիվերսիա կան-խելու մասին, որի հետեւանքով վիրաւորուել է երկու հայ զինա-ուսուցիչ: Ադրբեջանական կողմի կո-րուստները, ըստ Հայաստանի ՊԵ-ի՝ ճշտում են:

Յետոյ արդէն հակառակորդի կրակոցներից վիրաւորուել էր Ոսկէվան գիւղի 14-ամեայ բնակի-չը, որի վիճակը գնահատուած է կայուն ծանր:

Ադրբեջանը վերջին ամիսնե-րին բաւական ակտիւ է Տաւուշի սահմանի ուղղութեամբ, որտեղ ադրբեջանական կանոնաւոր ստո-րաբաժաններին փոխարինեց սահմանապահ զօրքը: Այդ քարոզ-չական քայլը սակայն որեւէ կերպ փոփոխութիւն չի բերել Ադրբե-ջանի վարքագծում: Առաւել եւս, որ ադրբեջանական սահմանապահ ուժերը ռազմատեխնիկական հա-մալրուածութեան առումով գրեթէ հաւասարագոր են կանոնաւոր բա-նակի ստորաբաժաններին:

Արդեօք Ադրբեջանն այդպի-սով փորձում է ընդգծել, որ գործ ունի Հայաստանի հետ, ոչ թէ Արցախի՝ ի պատասխան Արցախի սուբիեկտութեան մասին Երեւանի պնդման: Թ՞է Բաքուն Արցախի ուղղութեամբ փորձում է գոնայ լինել, որպէսզի չտայ հրադադարի պահանջման մեխանիզմների տե-ղակայման հարցին անդրադառնա-լու առիթ: Թ՞է Տաւուշի, այսինքն ՀԱՊԿ դէ իւրէ պատասխանատուու-թեան գօտու ուղղութեամբ կրա-կոցներով Ալիեւը փորձում է խօսել Ռուսաստանի հետ, հրաւիրել Ռու-սաստանի ուշադրութիւնը:

Հնարաւոր է դիտարկել Բաք-ուի գործողութիւնների ամենա-տարբեր շարժառիթներ եւ միա-ժամանակ գործնականում անհնար է հասկանալ, թէ երբ, որ ուղղու-թեամբ եւ ինչի համար կարող է կրակել Ալիեւը: Կրակոցը նրա համար գործնականում միջազգա-յին քաղաքականութեան սուղ ռե-սուրսներից մէկն է՝ նաւթի կող-քին: Միաժամանակ, ակնյայտ է, որ թէ նաւթը, թէ կրակոցը դառնում են աւելի ու աւելի սպառուող ռեսուրս:

մի թէ անմիջական ադրբեջանա-կան, թէ լայն աշխարհաքաղաքա-կան, ռեգիոնալ նպատակադրում-ներն ու մոտիւները եղել են բոլո-րովին այլ, առաւել ընդգրկուն, եւ հայկական զինուժը եւ հանրու-թեանը հաւասարակշռութեան տո-տալ խախտման պայմաններում այդուհանդերձ կարողացել է պա-հել գրոհն ու անգամ անցել հակազրոհի:

Աւելին, այդ առնչութեամբ օրերս անսպասելի յայտարարու-թիւն էր արել Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազանը,

Կայ տեսակէտ, թէ նաւթի սպառման հանգամանքը նա կարող է փոխարինել կրակոցների ուժգ-նացմամբ: Գործնականում սակայն, այդ ռեսուրսի քաղաքական ար-դիւնաւէտութիւնը Ալիեւի համար սպառուել է աւելի վաղ, քան նաւ-թը: Դա չի նշանակում, որ նա չի կրակելու: Ամբողջ հարցն այն է, որ կրակոցները այլեւս ոչինչ չեն տալիս Ալիեւին:

Ահա այստեղ յատկանշական է Հայաստանի արտգործնախարարու-թեան յայտարարութեան մէջ շեշ-տադրումը, որ Ալիեւն ըստ երեւոյ-թին չի տիրապետում ադրբեջա-նական բանակին, չի կառավարում այն: Հայաստանի արտգործնախա-րարութիւնը փաստացի ազդարա-րում է, որ Ալիեւն Ադրբեջանում իշխանութիւն չէ, որովհետեւ Բաք-ւում իշխանութիւն է նա, ով տի-րապետում է բանակին: Ըստ այդմ, ո՞վ է տիրապետում ադրբեջանա-կան բանակին՝ Մեհրիբան Ալիե-ւա՞ն, որն ըստ երեւոյթին փոր-ձում է արագացնել Ադրբեջանում իշխանութեան լիարժէք անցումը իր դէ իւրէ ենթակայութեան տակ, թ՞է Ադրբեջանի բանակը վերցրել է Թուրքիան, թո՞յլ չտալու համար, որ Ռուսաստանը վերցնի Ադրբե-ջանի իշխանութիւնը Մեհրիբան Ալիեւայի միջոցով:

Հայաստանի համար խնդիրը մէկն է՝ թո՞յլ չտալ, որ Ադրբեջանի իշխանութեան հարցը լուծուի հայ զինուորների եւ քաղաքացիների կեանքերի հաշուին, եւ այնպէս անել, որ այդ հարցը լուծուի ադրբեջանական կորուստների հաշ-ուին:

«ԼՐԱԳԻՐ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՊԱՇՏՕՍԱԹԵՐՈ՝ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱՎԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ ՎԱՅԷԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly

Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, \$100.00 (First Class) Canada \$125.00 (Air Mail) Overseas \$250.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY

Սերժ Սարգսեանը Կասի Մանրամասները Յանձնաժողովին

ԱՐԱՍ ԱՍՏՏՈՒՆԻ

Ապրիլեան պատերազմի հան-գամանքներն ուսումնասիրող խորհրդարանական ժամանակաւոր յանձնաժողովը հրաւիրելու է Սերժ Սարգսեանին, ինչպէս նշել է յանձ-նաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեանը: Դա փաստօրէն այս-պէս ասած վերջին ակտն է, որով-հետեւ դրանից յետոյ թերեւս պէտք է պատրաստուել յանձնաժողովի գեկոյցը կամ եզրակացութիւնը: Կը գնայ Սերժ Սարգսեանը, կ'ըն-դունի յանձնաժողովի հրաւերը, թ՞է ինչպէս ԶՈՒ գլխաւոր շտաբի

նախկին պետ ԵՈւրի Սաջատուրովը՝ Սարգսեանը եւս կը հրաժար-ուի:

Ապրիլեան քառօրեայ պատե-րազմը Հայաստանի նորագոյն պատ-մութեան շրջադարձային կէտն է, ընդ որում ռեգիոնալ եւ աշխար-հաքաղաքական լայն համատեքս-տով: Հայաստանի համար այդ կէ-տը խիստ հակասական է: Հայաս-տանը՝ ներառեալ Արցախը, ունե-ցել է տարածքային կորուստ, կամ դիրքային կորուստ, բայց միեւ-նոյն ժամանակ հայկական կողմն այդ պատերազմում յաղթել է, քա-նի որ անկասկած է, որ պատերազ-



ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աջակցութիւն կը Տրամադրուի Տարբեր Ոլորտներու Աշխատակիցներուն, Յոյ Կանանց եւ Աշխատանքէն Ազատուածներուն

Կառավարութեան 30 Մարտի արտահերթ նիստը «Քորոնա» ժահրի հետեւանքներու չէզոքացման եւս 3 փաթեթ հաստատեց, աջակցելու 13 Մարտէն սկսեալ առանց աշխատանքի մնացած մարդոց: Առաջին ներկայացուած փաթեթը կը վերաբերի զբօսաշրջութեան ոլորտի աշխատողներուն:



Աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարար Զարուհի Պաթոյեան

«Միջոցառման շահառու են հանդիսանում Հայաստանի Հանրապետութեան այն քաղաքացիները կամ ֆիզիքական անձինք, ովքեր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական, իրաւական գործի հիման վրայ աշխատանքային յարաբերութիւնների մէջ են գտնուել մասնաւոր հատուածի գործատուի հետ անընդմէջ, առնուազն 20 թուականի Յունուարի 1-ից մինչեւ Մարտի 13-ը ժամանակահատուածում, սակայն ազատուել են աշխատանքից 2020 թուականի Մարտի 13-ից մինչեւ Մարտի 30-ն ընկած ժամանակահատուածում», - ներկայացուց աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարար Զարուհի Պաթոյեան:

Կառավարութեան ներկայացուած յաջորդ փաթեթը ամենամեծ թիւով շահառուները կ'ունենայ, առեւտուրի ոլորտի վարձու աշխատողները, որոնք ժամանակաւորապէս առանց աշխատանքի մնացած են, ինչպէս նաեւ անհատ ձեռնարկատէրեր: Վարչապետ Փաշինեան, սակայն, կրկին շեշտեց, որ կառավարութիւնը կ'աջակցի գրանցուած աշխատողներուն, որոնց վերաբերեալ տեղեկութիւններ ունի:

«Ընդհանրապէս այս իրավիճակը մեզ պէտք է ցոյց տայ, որ բոլորը պէտք է հաշուառուեն, բոլոր աշխատողները, բոլոր ամբողջական աշխատավարձերը եւ այլն: Մենք չհաշուառուած դէպքերի յետեւից չենք կարող գնալ, որովհետեւ դա մութ անտառ է, որտեղ ոչ ոք չգիտի, թէ ինչ է տեղի ունենում», - նշեց Նիկոլ Փաշինեան:

Կառավարութեան նիստին յաջորդող ասուլիսին փոխ վարչապետ Մհեր Գրիգորեանի հարցուցին աշխատանքային պայմանագիրներ չունեցող հարիւրաւոր մարդոց մասին, որոնք արտակարգ իրավիճակի պայմաններուն զրկուած են օրական եկամուտէն:

«Շատ ենք մտածում այդ հարցի շուրջ: Կարծում եմ, որ ինչ-որ պահի ինչ-որ միջոցառում էլ հնարաւոր է իրականացուի, բայց այս պահի դրութեամբ նոյնականացման գործիքակազմ ուղղակի գոյութիւն չունի: Տեսնենք, հիմա քննարկումները շարունակուում են», - պատասխանեց փոխ վարչապետը:

«Քորոնա» ժահրի դէմ Պայքարի Համար Բացուած Հաշուին Փոխանցուած է Աւելի Քան 1.6 Միլիոն Տոլար

Advertisement for COVID-19 support with logo of Ministry of Health of the Republic of Armenia and phone number 900005001947.

ՀՀ ֆինանսներու նախարարութիւնը տեղեկացուց, որ զանազատարանի մօտ բացուած «Քորոնա» ժահրի դէմ Պայքարի կանխարգելման եւ յաղթահարման ապահովման համար դրամական աջակցութեան 900005001947 հաշուին՝ Ապրիլ 1-ի դրութեամբ մուտքերը կազմած են

135 Միլիոն Տոլար Կորուստները Հայաստանի Զբօսաշրջութեան Ոլորտին



Զբօսաշրջութեան պետական կոմիտէի նախագահ՝ Սուսաննա Սաֆարեան

Կառավարութեան հրաւիրած ասուլիսին, Զբօսաշրջութեան պետական կոմիտէի նախագահ՝ Սուսաննա Սաֆարեան անդրադարձաւ զբօսաշրջութեան ոլորտին մէջ արձանագրուած վնասներուն:

«Կորուստները գումարային առումով արձանագրուած չեն, բայց առաջին եռամսեակում արդէն իսկ բաւական զբօսաշրջային այցելութիւնների նուազում կայ: Քանակական առումով կարող եմ ասել, որ Հայաստան առաջին եռամսեակի ընթացքում չի այցելել մօտ 175 հազար զբօսաշրջիկ: Դա բաւական մեծ կորուստ է ոլորտի համար՝ հաշուի առնելով, որ առաջին եռամսեակը դեռ զբօսաշրջային ամենաաշխույժ շրջանը չէր, եւ այդ ընթացքում դեռ կային բաց սահմաններ: Երկրորդ եռամսեակի ընթացքում աւելի վատ կարող է լինել, քանի որ փակ սահմաններ են, թռիչքներ չեն իրականացուում, զբօսաշրջային այցելութիւններ գրեթէ չեն լինելու: Դա նշանակում է, որ այն զբօսաշրջային մուտքերը, որոնք նախատեսուած էին, չեն լինելու: Դեռեւս չեմ կարող ասել, թէ ֆինանսական ինչ վնասներու մասին է խօսքը, բայց եթէ հաշուենք մէկ զբօսաշրջիկի բաժին ընկնող

արժէքով, առաջին եռամսեակում դա կազմել է 175 հազար անգամ 770 ԱՄՆ տոլար: Դա մէկ զբօսաշրջիկի միջինացուած ծախսն է Հայաստանում», - ըսաւ Սաֆարեանը:

Ան անդրադարձաւ նաեւ այն հարցին, որ ոլորտի որոշ ընկերութիւններ լուծարման գործընթաց սկսած են, իսկ պատճառներէն գլխաւորը հարկային բեռն է:

«Մեր հաղորդակցութիւնը զբօսաշրջային տարբեր կազմակերպութիւնների հետ ցոյց է տուել, որ հիմնական ծախսերը, որոնք ունեն այս պահին, իրենց համայնական ծախսերն են, աշխատակիցների աշխատավարձերը եւ հարկային պարտաւորութիւնները: Այս իսկ պատճառով կառավարութեան աջակցութեան գործիքակազմը որոշակիօրէն ծածկում է այդ կարիքները: Չեմ ասում՝ ամբողջութեամբ, որովհետեւ դեռ կան զբօսաշրջային հիմնարկներ, որոնց այս ծրագրերով անդրադարձ չկայ, բայց կը լինի», - ըսաւ Սաֆարեան: Ինչ կը վերաբերի լուծարման, ան ըսաւ, որ բանաւոր յայտարարութիւն չատեր ըրած են, եւ եթէ իրավիճակը չշտկուի, հնարաւոր է, որ դիմեն նման քայլերու, բայց դեռեւս այս մասին գոյքագրուած չկայ:

Մահացած է Լեւոն Արոնեանի Կինը՝ Արիանա Կառիլին

Հայաստանի լաւագոյն շախմատի վարպետ եւ աշխարհի գաւթակիր Լեւոն Արոնեանի կինը՝ Արիանա Կառիլին Մարտ 30-ի երեկոյեան մահացած է Երեւանի հիւանդանոցներէն մէկուն մէջ:



Լեւոն Արոնեանի եւ Արիանա Կառիլի

Արիանա Կառիլին Մարտ 14-ի ուշ երեկոյեան ինքնաշարժի արկածի ենթարկուած էր, երբ իր վարած մեքենայով, Սեբաստիա փողոցին վրայ գարնուած էր «Երեքնուկի» կամուրջի պեթոնէ յենասիւնին:

Վթարէն յետոյ «Աստղիկ» բժշկական կենտրոն տեղափոխուած Արիանա Կառիլին կը գտնուէր վերակենդանացման բաժանմունքը՝ թոքերու հետ կապուած լուրջ

խնդիրներով եւ ենթարկուած էր մի քանի վիրահատութեան: 33 ամեայ Արիանա Կառիլին ազգութեամբ ֆիլիպինցի էր եւ իր կարգին շախմատի վարպետ: Ան Արոնեանի հետ ամուսնացած էր 2017-ին:

822.549.779,5 դրամ (1.6 միլիոն տոլար), իսկ մասնակից անհատներու եւ կազմակերպութիւններու քանակը՝ 3128:



# ԼՈՒՐԵՐ

## Վերին Լարսի Սեջ Առանձին Գօտի Կ'առանձնացուի Հայաստանի Բեռներուն Համար



Վերին Լարսի անցակետի մօտ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան կառավարութեան մէջ հանդիպում ունեցած է արտահանմամբ եւ ներածմամբ զբաղող խոշոր ընկերութիւններու ղեկավարներուն հետ, յայտնած են վարչապետի աշխատակազմէն:

Վարչապետը նշած է. - «Նախ ուզում եմ շնորհակալութիւն յայտնել, որ ի հեճուկա բոլոր դժուարութիւններէ, շարունակում էք աշխատել որքան հնարաւոր է բնականոն ձևով: Ի հարկէ, այս ժամանակահատուածում մենք խնդիր ունենք համակարգել մեր գործողութիւններն ու առաւելագոյնը լաւ պայմաններ ապահովել մեր երկրից արտահանումների եւ դէպի մեր երկիր ներդրումների համար: Ես կարող եմ ասել, որ վերջին օրերին աշխատել ենք վրաստանի եւ Ռուսաստանի մեր գործընկերների հետ եւ երէկ պայմանաւորուածութիւն ենք ձեռք բերել, որ եւ՝ վրաստանը, եւ՝ Ռուսաստանը կ'ապահովեն, այսպէս ասած, «կանաչ գօտի» ԵԱՏՄ (Եւրոպայի տնտեսական միութիւն) բեռների համար, այսինքն՝ վրաստանի տարածքով եւ վերին Լարսում առանձին գօտի կ'առանձնացուի, ըստ էութեան, Հայաստանի բեռների համար: Ի հարկէ, քաղաքական մակարդակում պայմանաւորուածութիւնը՝ պայմանաւորուածութիւն, բայց պէտք է դա դեռ իրականութիւն դարձնել եւ կեանքի կոչել:

Նաեւ քանի որ այժմ ՌԴ-ում տարբեր սահմանափակումներ մտցնելու արագ որոշումներ են կայացուցում, եւ դա կարող է որոշակի խուճապալի տրամադրութիւններ առաջացնել Հայաստանում, սպառողների շրջանում մասնաւորապէս, շատ կարեւոր է արձանագրել, որ մենք պայմանաւորուածութիւն ենք ձեռք բերել, որ, ըստ էութեան, սահմանափակումները, որոնց մասին կը յայտարարուի, չեն վերաբերելու ԵԱՏՄ-ին կամ առնուազն Հայաստանին»:

Վարչապետն ընդգծած է, որ վերը նշուած պայմանաւորուածութիւնը յստակ է եւ վերջնական: Նիկոլ Փաշինեան աւելցուցած է, որ նկատի առնելով ապրանքային մատակարարման խնդիրը, Ռուսաստանի գործընկերներն ալ շահագրգռուած են, որպէսզի իրենց ապրանքները մատակարարուին բնականոն հունով:

Փաշինեան նշած է, որ ապրանքներու բաւական պաշարներ ունինք: «Նաեւ պէտք է հասկանանք, թէ այս շրջանում արտահանման եւ ներմուծման հետ կապուած խնդիրներն ինչպէս ենք համակարգում, որպէսզի այն պայմանաւորուածութիւնները, որ Ռուսաստանի եւ վրաստանի քաղաքական ղեկավարութեան հետ ունեցել ենք, բնականոն ձևով իրագործուեն»:

Այնուհետեւ տնտեսվարողները ներկայացուցած են արտահանման եւ ներմուծման կապակցութեամբ յառաջացած խնդիրներն ու դժուարութիւնները, անոնց լուծման առաւելագոյն խնդիրներով: Անհրաժեշտ պարզաբանումներ ներկայացուցած են էքոնոմիքայի (տնտեսութեան) նախարար Տիգրան Խաչատրեանն ու Պետական եկամուտների կոմիտէի նախագահ Դաւիթ Անանեան:

Վարչապետը տնտեսութեան նախարարին յանձնարարած է, ներկայացնել գործարարներու հետ միշտ կապի մէջ մնալու գործելակերպ, արագացնելու վերջիններուն խնդիրները ու գտնել լուծումներ: Նիկոլ Փաշինեան ընդգծած է, որ նկատի առնելով արտարժուութային եւ լոգիստիկ խնդիրները, կառավարութիւնը հաստատած է «Քորոնա» ժահրի հետեւանքներու չէզոքացման հակաձգնաժամային միջոցառումներու քանի մը ծրագիրներ, որոնցմով կը կիրառին տնտեսվարողներու վտանգները, տրամադրելով արտօնել, անոր կարգին, գէրոյական տոկոսով վարկային միջոցներ:

«Մեր քաղաքական կամքն այն է, որ ինչով կարողանանք՝ տնտեսվարողներին աջակցենք», - ընդգծած է վարչապետը, կարեւորելով այնպիսի գործելակերպերու ներդրումը, որոնք թոյլ կու տան պետութեան եւ մասնաւոր հատուածին, ձգնաժամային իրավիճակներու մէջ գործել արագ եւ արդիւնաւէտ:

## ՀՀ Արտաքին Գործոց Նախարարութիւնը Արձագանգեց Թուրքիոյ Յայտարարութեան



Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութիւնը արձագանգած է Արցախի մէջ տեղի ունեցող ընտրութիւններու վերաբերեալ Թուրքիոյ արտաքին գերատեսչութեան յայտարարութեան.

«Թուրքիայի արտգործնախարարութեան յայտարարութիւնը Լեռնային Ղարաբաղում անցկացուող ընտրութիւնների վերաբերեալ հայ ժողովրդի հանդէպ այդ երկրի թշնամական քաղաքականութեան հերթական արտայայտութիւնն է:


Հաւատարիմ լինելով միջազգային փաստաթղթերի ընտրովի մեկնաբանութեան իր աւանդական դիրքորոշմանը՝ Թուրքիան մի կողմից վկայակոչում է ՄԱԿ Անվտանգութեան խորհրդի բանաձեւերը, միւս կողմից՝ անտեսում վերջիններիս՝ անմիջականօրէն տարածաշրջանի երկրներին ուղղուած կոչը՝ ձեռնպահ մնալու դարաբանական հակամարտութեան համաթեքութեամբ որեւէ թշնամական գործողութիւններից: Մինչդեռ հենց նոյն Թուրքիան է տասնամեակներ ի վեր ցամաքային շրջափակման ենթարկեալ Հայաստանի Հանրապետութեանը եւ աջակցում է Արցախի ժողովրդի դէմ սանձազերծուող թշնամական եւ վայրագ գործողութիւններին՝ այդ թուում 2016 թ. ապրիլին:

Նոյնքան անհիմն է Թուրքիայի արտգործնախարարութեան կողմից ԵԱՀԿ (Եւրոպայի Անվտանգութեան եւ Համագործակցութեան կազմակերպութիւն) սկզբունքների եւ Մինսքի գործընթացի վկայակոչումը: Յիշեցնում ենք, որ 1992թ. մարտի 24-ի ԵԱՀԿ/ԵԱՀԿ (Եւրոպայի Անվտանգութեան եւ Համագործակցութեան խորհրդաժողով) այն որոշումը, որով հիմք է դրուել Մինսքի գործընթացին, յղում է կատարում Լեռնային Ղարաբաղի ընտրեալ ներկայացուցիչներին՝ որպէս այդ գործընթացի մասնակից: Ընտրեալ ներկայացուցիչներ ունենալու համար պէտք է ունենալ ընտրութիւններ, եւ այդ տեսակէտից Արցախում անցկացուելիք ընտրութիւնները ոչ միայն չեն հակասում այլ բխում են խաղաղ կարգաւորման տրամաբանութիւնից եւ դրա հիմքում դրուած փաստաթղթերից:

Թուրքիայի փորձերը հանդէս գալու միջազգային իրաւունքի պաշտպանի դերում եւ նրա կոչերը միջազգային համայնքին առաւել քան սնանկ են՝ այդ երկրի կողմից ժողովուրդների իրաւունքների եւ հարեւան երկրների տարածքային ամբողջականութեան նկատմամբ շարունակական ոտնձգութիւնների եւ միջազգային իրաւունքի ու ժողովրդավարութեան նորմերը ոտնահարող թշնամական քաղաքականութեան իրականացման լուրջ ներքոյ»:

## Ամերիկայի Միացեալ Նահանգները, Չինաստանը Եւ Եւրոպական Միութիւնը Աջակցութիւն Կը Տրամադրեն Հայաստանին

Նոր տեսակի «Քորոնա» ժահրի տարածումը կանխելու նպատակով Հայաստանին օգնութիւն պիտի տրամադրուի Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Չինաստանի եւ Եւրոպական միութեան կողմէ, մամուլի ասուլիսին ժամանակ ըսաւ Արտաքին գործոց նախարարի տեղակալ Աւետ Ատոնց:



«ԱՄՆ-ն Հայաստանին տրամադրելու է 1.1 մլն ԱՄՆ տոլարի օգնութիւն: ԵՄ-ն 140 մլն եւրօ գումար է տրամադրելու արեւելեան 6 գործընկերներին, որոնք բաշխուելու են երկրների միջեւ: Այդ 140 միլիոնից 30 միլիոնն ԱՀԿ-ի (Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութիւն) միջոցով ուղղուելու է համապատասխան առողջապահական սարքաւորումներ ձեռք բերելուն, 100 միլիոնն ուղղուելու է ՓՄՁ-ներին (Փոքր եւ միջին ձեռ-

նարկատիրութեան) աջակցելուն, եւ 10 միլիոնը՝ ՀԿ-ներին՝ (հասարակական կազմակերպութիւններ) COVID-19-ի դէմ պայքարի համար: Օրեր առաջ ՉՆՀրապ Մնացականեանը նամակ է ստացել Չինաստանի իր գործընկերոջից, որտեղ Չինաստանի կառավարութիւնն իր պատրաստակամութիւնն է յայտնել միջոցների եւ հնարաւորութիւններ իր սահմաններում ՀՀ-ին աջակցութիւն ցուցաբերելու առումով», - յայտնեց Ատոնցը:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք  
**«Մասիս» Շաբաթաթերթին**  
Tel: (626) 797-7680  
Massis2@earthlink.net



# Գործազրկութեան Եւ Աղքատութեան Աճ. Ինչի Կը Յանգեցնի Արտագնայ Աշխատանքի Մեկնողների Թուի Նուազումը

ՍՈՆԱ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ

Նոր կորոնավիրուսով պայմանաւորուած իրավիճակը, յայտարարուած արտակարգ դրութիւնը դժուարացրել է մարդկանց կեանքը բոլոր իմաստներով՝ սկսած ազատ տեղաշարժից, մինչեւ եկամուտների հայթայթում: Սկսել է բարդանալ յատկապէս մշտական աշխատանք չունեցող եւ այս սեզոնին պարտադիր արտագնայ աշխատանքի մեկնողների ու նրանց ընտանիքների վիճակը: «Խոպանչիները» արտագնայ աշխատանքի չեն կարողանում մեկնել, իսկ արդէն մեկնածներն էլ՝ չեն աշխատում, պարապուրդի են մատնուած, քանի որ Ռուսաստանում եւ այլ երկրներում նոյնպէս վարակի տարածմամբ պայմանաւորուած բազմաթիւ սահմանափակումներ կան, այդ թւում՝ շինարարութիւնը:

Գեղարքունիքի մարզից 20 տարի շարունակ գարնանը ՌԴ արտագնայ աշխատանքի մեկնող վարդան կարապետեանը արդէն գործատուի հետ պայմանները համաձայնեցրել էր, հաւաքել ճամպուրակը, բայց արտակարգ դրութեան սահմանափակումներից յետոյ չի կարողացել մեկնել: Նա «Առաջին Լրատուական»-ի հետ գրոյցում ասաց, որ բարդ իրավիճակում է յայտնուել, նախորդ տարուանից բերած եկամուտները արդէն սպառուել են, եւ լուրջ խնդրի առաջ է կանգնելու իր ընտանիքը, եթէ իրավիճակը չկարգաւորուի եւ ինքը նորից չմեկնի արտագնայ աշխատանքի: «Ես երեք երեխայ ունեմ, ընտանիք պահելու խնդրի առաջ ենք կանգնել: 20 տարի ամէն գարուն գնացել եւ Նոյնմբեր-Դեկտեմբերին եկել եմ: Հիմա չգիտեմ՝ ինչ անեմ, չենք կարում երկրից դուրս գանք, բայց չգիտենք էլ, ինչքան կը ձգուի էս վիճակը, ու դուրս գալու դէպքում Ռուսաստանում կարանք աշխատենք, աշխատանք կը լինի, թէ չէ: Շատ վատ վիճակ ա, բայց էնպէս էլ չի, որ Հայաստանում կարանք աշխատանք ճարենք ու ստեղ աշխատենք: Անորոշ վիճակ ա», - ասաց մեր գրուցակիցը՝ աւելացնելով, որ իր վիճակում հարիւրաւոր մարդիկ են յայտնուել: «Մենք հիմա խօսում ենք մեր ընկերների, բարեկամների հետ, ովքեր գնացել են արդէն մինչեւ արտակարգ դրութիւնը, իրենք էլ են անորոշ վիճակում: Մի քանի հոգի աշխատում են տարբեր տեղերում, որտեղ դեռեւս արգելքներ չկան, բայց հիմնական մասը անգործ նստած է, չգիտեն՝ վերադառնան, թէ ոչ», - ասաց մեր գրուցակից քաղաքացին:

Այս ֆօնին, այսինքն՝ արտագնայ աշխատանքի մեկնողների թուի նուազման, տրանսֆերտների կտրուկ նուազման դէպքում տնտեսագէտ, «տնտեսական իրաւունքի կենտրոն» ՀԿ նախագահ Մովսէս Արիստակէսեանի խօսքերով՝ առաջիկայում կտրուկ կ'աւելանան գործազրկութեան եւ աղքատութեան թուերը՝ սոցիալ տնտեսական բոլոր հետեւանքներով:

«Տրանսֆերտների նուազումը իր ազդեցութիւնը կունենայ նաեւ ՀՀ բիւջէի վրայ: Շատ տխուր եւ ծանր հետեւանքներ են լինելու, բայց այս վիճակը ցոյց է տալիս, որ տարիներ շարունակ պետութիւնը չի հոգացել իր քաղաքացիների մասին եւ չի փորձել աշխատատեղեր ստեղծել իր երկրում, որպէսզի իր քաղաքացիները չմեկնեն արտագնայ աշխատանքի: Այսօրուայ վիճակը 30 տարի շարունակ վատ, սխալ տնտեսական քաղաքականութեան ցցուն օրինակ է», - «Առաջին Լրատուական»-ի հետ գրոյցում ասաց Արիստակէսեանը՝ յաւելելով, որ այսօրուայ իշխանութիւնները պէտք է իրենց ռազմավարական պլանները փոխեն, ճգնաժամի յաղթահարումից յետոյ կառուցեն այնպիսի տնտեսութիւն, աշխատատեղեր, որպէսզի ֆորս-մաժորային իրավիճակներում նման անկումային վիճակ չստեղծուի: «Պէտք է այնպիսի ծրագիր մշակել, որ մարդիկ մնան երկրում եւ աւելացուած արժէք ստեղծեն իրենց երկրում:

Դա նաեւ կը նպաստի ժողովրդագրական իրավիճակին: Պետութիւնը ինքը պէտք է լինի լոկոմոտիվը այնպիսի տնտեսութեան, կազմակերպութիւնների զարգացմանը, որոնք հիմնուած կը լինեն ՀՀ նիւթական պաշարների վրայ, կը լինեն գիտելիքահան, քիչ նիւթատար, եւ դրա հիման վրայ հնարաւոր կը լինի ստեղծել փոքր ու միջին բիզնեսի լայն ցանց, ու կ'ապահովուեն աշխատատեղեր», - ասաց Արիստակէսեանը յաւելնելով նաեւ՝ «Ժամանակն է, որ իշխանութիւնը ժողովրդից ստացած քուէով անցնի կտրուկ գործողութիւնների եւ ռազմավարութիւնների մշակման:

Նշենք, որ 2019 թուականը եղել է մասնաւոր տրանսֆերտների ամենացածր մակարդակը Հայաստանում վերջին 20-30 տարուայ մէջ: 2019-ին Հայաստան է եկել 540 միլիոն դոլարի տրանսֆերտ: Սա այն դէպքում, երբ նախկինում դա լինում էր 1.5 միլիարդ, 1.3 միլիարդ:

Աժ «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր, Աժ տնտեսական հարցերի մշտական յանձնաժողովի անդամ Հայկ Գեորգեանի խօսքերով՝ ուշագրանային է, որ եթէ նախկինում տրանսֆերտների նուազումը շատ արագ ու շատ ուղղակի բացասական ազդեցութիւն էր ունենում մեր տնտեսութեան վրայ, ապա 2018-2019 թուականներին որեւէ բացասական ազդեցութիւն մեր տնտեսութիւնը չի գրգռել, որը շատ կարեւոր է: Նրա խօսքերով՝ մասնաւոր տրանսֆերտների կտրուկ նուազման ֆօնին Հայաստանի արտաքին պահուստները կտրուկ աճել են, որը, տնտեսագէտի խօսքերով, խօսում է տնտեսութեան որակի, կառուցուածքի, տնտեսական համակարգի փոփոխութեան մասին: Իսկ թէ ինչ կը լինի առաջիկայում, ինչ պատկեր կը ստեղծուի, դեռեւս վաղ է ասելը:

# Ֆրանսահայ Քաղաքական Գործիչ Պատրիկ Տեւէճեանի Մահը Կը Սգան Ֆրանսայի Եւ Հայաստանի Մէջ

Ֆրանսիայի մէջ «Քորոնա» ժահրով մահացած է հայազգի քաղաքական գործիչ, Օ-տե-Սեն Բաժանմունքի գլխաւոր խորհուրդի նախագահ եւ Ֆրանսիայի նախկին արդիւնաբերութեան նախարար Պատրիկ Տեւէճեան:

75-ամեայ Տեւէճեան մի քանի օրեր առաջ յայտնած էր, որ հիւանդութիւնը հասած է նաեւ իրեն, բայց բժշկներու շնորհիւ կ'ապաքինի եւ ունի զգալի տեղաշարժ:

Պատրիկ Տեւէճեանի մահուան առթիւ ցաւակցական խօսքեր յայտնեցին Ֆրանսայի նախկին նախագահներ՝ Նիկոլա Սարկոզի, Ֆրանսուա Օլանդ եւ այլ քաղաքական դէմքեր:

Հայազգի գործիչի մահուան սուգին առթիւ ցաւակցական խօսքեր յղեցին ՀՀ նախագահ Արմէն



Սարգսեան, վարչապետ Նիկոլ Փաշինեան, Արցախի նախագահ Բակո Սահակեան եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդ:

# Արայիկ Յարութիւնեան Եւ Մասիս Մայիլեան

Շարունակուած էջ 1-էն

քուէարկութեան մասնակցած են 76,728 քաղաքացիներ՝ ընտրողներու թիւի 73,5 տոկոսը:

ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Ալեն Սիմոնեան Արցախի մէջ կայացած ընտրութիւններէն յետոյ լրագրողներու հետ հանդիպման ընթացքին նշեց, որ իրենց պատգամաւորական խումբը շրջած է բոլոր տեղամասերով, եւ ընդհանուր առմամբ ընտրութիւններ կը զնահատեն դրական:

«Կային խնդիրներ, որոնց շուրջ աշխատելու տեղ կայ, բայց պէտք է ասել, որ այսօրուայ տուեալները, որը ունենք, արտացոլում են այն պատկերը, որը արցախցին ձեւաւորել է ընտրութեան միջոցով: Ակնկալում ենք գալիք փուլը կը լինի աւելի լաւ կազմակերպուած, եւ աշխարհում գոյութիւն ունեցող վիճակը չի կարողանայ

խանգարել, քանի որ բոլորս հասկանում ենք որքան կարեւոր է Արցախում հերթական ընտրութեան կայացումը, եւ յուսամ, որ հնարաւորութիւն կը լինի 14 օր անց գտնուել այստեղ եւ շրջել տեղամասերով», ըսաւ Ալեն Սիմոնեան:

Դիտորդական առաքելութիւն իրականացնող «Իրազեկ Քաղաքացիներ Միաւորումի» ծրագրերու համակարգող Դանիէլ Իոաննիսեան լրագրողներու հետ հանդիպման ժամանակ յայտնեց, որ, Քարվաճառի մէջ «Ազատ Հայրենիք» կուսակցութեան թեկնածու Արայիկ Յարութիւնեանի աջակիցները ընտրողներ տեղափոխած են յատուկ ինքնաշարժերով: Անոր կարծիքով նախընտրական քարոզչութեան ժամանակ օգտագործուած են վարչական եւ բարեգործական միջոցներ, որոնք ունեցած են իրենց ազդեցութիւնը՝ ընտրողներու կարծիքի վրայ:

# Տար ֕րով կ'երկարաձգուին

Շարունակուած էջ 1-էն

րար Արսէն Թորոսեան այսօր Ֆէյսպուքի մէջ գրած է, որ 150 անձ դուրս եկած է մեկուսացումէն, որոնցմէ 65-ը իտալացիներ յատուկ շուքերով ժամանած քաղաքացիներն են:

Հայաստանի մէջ կը նախատեսուին «Քորոնա» ժահրի խտրողման բժշկական քննութիւնները (թեսթեր) արտադրել: Փոխ վարչապետ Տիգրան Աւինեանի համաձայն, կառավարութիւնը այս պահուստ հարցը կը քննարկէ գիտական ինսթիտուտներէն մէկուն հետ. - «Հենց հիմա, հենց էս փուլում փորձում ենք հասկանալ, թէ ինչքանով կարող ենք յատուկ սարքաւորումներ ներմու-

ծել, որոնք որ թեսթերը իրենց ինքնագործման ռեժիմով կ'իրականացնեն: Այս փուլում մօտաւորապէս ծրագրաւորուում է 100 հազար թեսթերի արտադրութիւնը՝ եթէ բոլոր պայմանները մենք կարողանանք ապահովել»:

Իսկ յառաջիկայ օրերուն, ինչպէս Հայաստանի մէջ «Քորոնա» ժահրի տարածումը կանխարգիլող աշխատանքները համակարգող յանձնաժողովի նիստին յայտարարեց Առողջապահութեան նախարարը, Հայաստանի առողջապահական համակարգը պիտի համալրուի 100 շնչառական սարքով, 60 հազար թեսթով ու այլ պարագաներով՝ դիմակներ, բժշկական յատուկ հագուստ, ակնոցներ եւ այլն:

# Գոնկրեղ Հաստատեց

Շարունակուած էջ 1-էն

աշխատանք կորսնցնելու պատճառաւ նպաստ ստանալու համար: Տնտեսական աջակցութեան ծրագիրը 500 պիլիոն տոլարի օժանդակութիւն պիտի յատկացնէ ամենէն աւելի տուժած տնտեսութիւններուն՝ օդանաւային ընկե-

րութիւններուն, ճաշարաններուն եւ այլ վաճառատուներուն, պայմանաւ որ անոնք շարունակեն վճարել իրենց պաշտօնեաներու աշխատավարձերը:

Պիլիոնաւոր տոլարներ պիտի տրուին նաեւ հիւանդանոցներուն, դպրոցներուն, նահանգային եւ տեղական կառավարութիւններուն:

**ՄԱՍԻՍ**  
 ԱՄԵՆԱՎՍՏԱՅԵԼԻ ԱԳԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ



# Յեղափոխական ժիրայրը Եւ Սոխրեճ

## Յառնող Յայ Ազգը

ԶԱԻԵՆ Գ. ՂԱՐԻՊԵԱՆ


Վերջերս ստացայ Տոբթ. Եղիկ ձերեճեանի հեղինակութեամբ 2019-ին լոյս տեսած «Ժիրայր» վերնագրով պատմագրական հատորը, որ չորրորդն էր 2016-էն ի վեր «Հրատարակ» վերնագրով իր հրատարակած գիրքերուն՝ «Մեծն Մուրատ»-էն, «Ս. Վահագն»-էն եւ «Պանդուխտ»-էն ետք:

Մանկութեան օրերուս յեղափոխական ժիրայր ու Փարամազ անունները, ինչպէս նաեւ 20 կախաղաններու պատմութիւնը, անջնջելիօրէն դրոշմուած էին իշխողութեանս մէջ: Դամասկոսի մէջ ամէն տարի Հ.Մ.Մ.-ի ակումբին մէջ, ուր ես քայլիկ էի, կը տօնուէին անոնց տարեդարձները. կը յուզուէի՝ բաց բան չէի հասկնար: Շուրջ 70 տարի վերջ ժիրայրի կենսագրութիւնը ներկայացնող գիրքը երբ ձեռքս անցաւ, ամէն տեսակ աշխատանք մէկ կողմ թողած, 200 էջոց գիրքը մէկ շաբթուան մէջ կարդացի: Հայոց Պատմութիւնը գիտ հետաքրքրած էր պատմական տարիներէն, երբ ՀԲԸՄ-ի Մեղգոնեան կրթական Հաստատութեան մէջ ուսանող էի: Հետագային ալ անյազօրէն կը կարդայի հայոց պատմութեան գիրքերը երբ առիթն ունենայի:

1960-ական թուականներու սկիզբը հայրենիքը դուռը բացաւ Սփիւռքի ուսումնասիրող հայ երիտասարդներու եւ երիտասարդուհիներու առջեւ եւ երկու հազարէ աւելի անձեր իրենց ուսման ծարաւը յագեցնելով դարձան մանկավարժներ, լրագրողներ, թատրոնի ու արուեստի հետեւողներ, բժիշկներ, ճարտարագետ-ճարտարապետներ եւ այլ ճիւղերու հետեւողներ: Ուսման հետեւողներէն մին էր նաեւ Եղիկ ձերեճեանը, հաճընցիի գաւազ, որ հետեւեցաւ ատամնաբուժական ճիւղին: Բայց Եղիկը ունէր նաեւ այլ նախասիրութիւն մը՝ Հայոց Պատմութիւն, յատկապէս 1850-1915-ի ազատագրական պայքարի պատմութիւնը, մասնաւորաբար հնչական ղեկավարներու պատմութիւնը: Պէտք է հոս յիշեմ, որ Տոբթ. Եղիկ ձերեճեան շրջան մը (1992-2009) դարձաւ Լիբանանի խորհրդարանի անդամ:

Ինչպէս վերը յիշեցի, Եղիկին հեղինակած չորրորդ գիրքը նուիրուած էր ժիրայրին, բուն անունով՝ Մարտիրոս Պոյաճեան: Ամփոփելով ժիրայրին մասին Եղիկին գրած գիրքը, քանի մը էջի մէջ կ'ուզեմ ներկայացնել ժիրայրին կենսագրականը: Ժիրայր՝ բուն անունով Մարտիրոս Պոյաճեան, ծնած 1856-ին, Հաճըն, Յակոբի եւ Սառայի ընտանիքին մէջ: Ան իրմէ մեծ եղբայր մը ունէր Յարութիւն անունով եւ իրմէ պզտիկ եղբայր մը՝ Համբարձումը՝ յեղափոխական Մեծն Մուրատը, նաեւ քոյր մը՝ Հայկանույշ: Մարտիրոսի հայրը, որ Չորիով շրջուն փերեզակ էր, 1875-ին կանուխէն կը մահանայ:

Այս ժամանակաշրջանին Կիլիկիան, Հաճըն քաղաքն ալ ներառեալ, ազգային զարթոնք կ'ապրի: Կրթութեան կարեւորութիւն կը տրուի: Հաճըն մէջ դպրոց կը բացուի Վարդանանց Ընկերութիւն անունով, որ հետագային կը դառնայ Կիլիկեան Ընկերութիւն անունի: Մարտիրոս դպրոց կը յաճախէ մինչեւ 1872 տարին, որմէ ետք ան կը մեկնի Կ. Պոլիս, ուր կ'ուսանի Ս. Փրկիչ վարժարանին մէջ: 1874-



ին Մարտիրոս կը վերադառնայ ծննդավայրը Հաճըն եւ ուսուցչութիւն կ'ընէ Վարդանանց Ընկերութիւն դպրոցին մէջ, ուսուցանելով թուաբանութիւն, տոմարակալութիւն, աշխարհագրութիւն եւ մարմնամարզանք, ու նոյն ատեն գաղտնի՝ լեռան վրայ գինավարժութիւն: Այդ տարիներուն է որ Մարտիրոս Պոյաճեանը կը ստանայ «Ժիրայր» ծածկանունը:

Գիրքը նախատեսուած է սփիւռքագէտներին, միջազգայնագէտներին, քաղաքագէտներին, պատմագէտներին, մարդաբաններին եւ ընթերցող լայն հասարակութեանէն:

Իրաքահայ հայրենադարձութիւնը, 2003-2008 թուականներէն նուիրուած այս հատորը ունի հինգ բաժիններ (գլուխներ), որոնց մէջ հեղինակը շատ խոր ուսումնասիրութիւններով եւ հաւաստի աղբիւրներով վրայ հիմնուած տեղեկութիւններով, տուած է իրաքահայ համայնքի մօտ 400 տարուայ պատմութիւնը: Հին եւ նոր եկուորներու պատմութիւնը անոնց ծաւալած ազգային, եկեղեցական, կրթական եւ հասարակական, հայապահպանման, ազգակերտման աշխատանքին, նաեւ տուած է այս համայնքի մեծ հայրենադարձութեան օրերուն, եկեղեցական տաճնապի շատ հետաքրքրական եւ պատմական բարեխիղճ տեղեկութիւնները:

Մեծ հայրենադարձութեան օրերուն անոր դէմ ու թեր կարծիքները եւ այլն, իսկ ամէնէն հետաքրքրական բաժինը այն է 2003-2008 թուականներուն Հայաստան վերադարձած հայութեան հետ ունեցած հարցազրոյցները, պատրաստած վիճակագրութիւնները: Նմանապէս հայրենի կեցուածքը այս հայրենադարձներու հանդէպ:

1947-ի մեծ հայրենադարձութեան պայմանները հիմնովին տարբեր էին 2003-2008 եւ մինչեւ օրս ալ իրաքահայութեան կամ Սուրիոյ հայութեան հայրենադարձութեան պատճառները:

1947-ի վերադարձողները առաւելաբար Հայոց Յեղասպանութեան զոհերն էին, կամ անոնց զաւակներն էին, որոնց համար հայրենիքի յուզական, ազգային, կրօնական մեծ արժէք եւ իմաստ ունէր, հակառակ անոր որ 1947-ի հայերը հազիւ տուն տեղ եւ իրենց գործերը գտած էին, բայց անոնց մէջ տակաւին հայրենասիրական անմար կրակ մը կար, որ տարաւ անոնց իրենց հայրենեաց երկիրը:

2003-2008 վերադարձողները, կեանքի, ինչքի եւ ապրուստի խիստ վտանգաւոր օրերու վախ ունէին եւ

ստիպուած էին հեռանալ իրաքէն, բազմահազար հայեր դէպի Սուրիա, Յորդանան, Եգիպտոս, Թուրքիա ու մանաւանդ ԱՄՆ, Աւստրալիա եւ Գանատա անցան քանի որ իրաքի մէջ որպէս քրիստոնեայ հայերուն համար այլեւս շատ վտանգաւոր էր հոն ապրիլը:

Գիրքին յաջորդ բաժինը հեղինակը կը ներկայացնէ ինչպէս ըսինք Հայաստան դարձած հայերուն կարծիքները եւ տպաւորութիւնները Հայաստանէն եւ հայրենի ժողովուրդէն, իրաքահայ մը իրաքի մէջ կեանքը նկարագրելով ըսած է. «Դժբախտաբար կեանքէն համ չէինք առներե միւսը ըսած է. «Ինչ որ ըլլայ հոս մենք եւ մեր զաւակները (24) հայերէն կը խօսինք ազատ եւ հպարտօրէն»:

Հայաստանը շատ ապահով է մեզի համար, ոչ առեւտրային կայ, ոչ զաւակդ, հարազատդ սպաննել կայ, իսկ դժգոհութիւն յայտնողներ ալ կան ըսելով. «Հոս ալ իրաքի պէս ամէն տեղ կաշառքով կ'ըլլայ, եւ այլն խօսքեր եւ կարծիքներ, որոնք հարազատօրէն տուած է հեղինակը:


Գիրքին միւս բաժինին մէջ հեղինակը տուած է սպառնիչ տեղեկութիւններ Հայաստանի մասնակցութիւնը իրաքի ապահովական ուժերուն, ուր 40 հայ զինուորներ մաս կազմեցին ՄԱԿ-ի դեկավարութեամբ գործող իրաքի ապահովագրական գործին մէջ: Հեղինակը տուած է այդ քայլը առած օրերուն հայրենիքի քաղաքական, հասարակական կամ զինուորական մարդոց կարծիքը եւ արդարացուածները:

2003-2008 տարիներուն Հայաստան դարձած հայերու մեծ մասը գոհ էր հայրենիքի մէջ ապրելէն, անշուշտ որոշ փոքրամասնութիւն մը կար, որ դժուարութիւն ունեցած էր ժողովուրդին

հետ շաղուելու կամ գործ գտնելու հարցին մէջ, ուրիշներ ալ անոնք Հայաստան երթալով, որպէս Եւրոպա կամ այլ երկիրներ երթալու համար Հայաստան որպէս ժամանակաւոր հանգրուան գործածելով: Հասկնալի էր, որ հայրենի պետութիւնը, երկրաշարժ տեսած, Սովետ Միութենէն անջատման դժուարութիւններով, պատերազմական վիճակով, երկու սահմանները փակուած ըլլալով եւ տնտեսական բնական հարստութենէ զուրկ էր այդ տարիներուն, հայրենիքի ծով կարիքներուն հասնիլ չկարողանալով, դժուար պիտի ըլլար զբաղիլ արտասահմանէն Հայաստան վերադարձող հայրենակիցներուն կարիքները ամբողջութեամբ հոգալու: Այսուհանդերձ այս գիրքին մէջ, այս հատորին գլխաւոր պատգամն է, հայրենիքի բազմակարօտ ժողովուրդին կենսական ապրուստը հոգալու կողքին հայրենիքի մեր իշխանաւորները պէտք է հայրենադարձութեան համակարգ մը ստեղծեն, որպէսզի սփիւռքէն հայրենիք վերադարձողներուն կեանքը դժուարութիւններուն նուազագոյնը ունենան:

Գիրքի վերջաւորութեան հեղինակը հարցազրոյց մը դրած է Լուս Անճելըսի մէջ գործող իրաքահայերու Ընտանեկան Միութեան նախագահ? Խաչիկ Ճանոյեանին հետ: Այս Միութիւնը 2005-2007 տարիներուն 135 իրաքահայեր Հալէպ տեղափոխելով, անկէ Հայաստան օդանաւով տեղափոխած է: Անոնց կահաւորուած վարձու յարկաբաժիններու մէջ տեղաւորած են եւ անոնց լման մէկ տարի օրապահիկը ապահոված է: Իւրաքանչիւր անհատի ամսական 100 տոլար զրկելով: Այսինքն հինգ հոգինոց ընտա-

Շար.ը էջ 15



**DEDICATED TO THE MEMORY OF THOSE WHO PERISHED IN 1915 AND THOSE WHOSE LIVES WERE SAVED BY HUMANITY**

Conducted by **American Red Cross** | Sponsored by **Armenian Educational Benevolent Union**

**FRIDAY, APRIL 24, 2020**  
**2:00pm - 8:00pm**

**AEBU Center**  
 1060 North Allen Avenue, Pasadena, CA 91104

**Schedule your Appointment**  
 Visit [www.redcrossblood.org](http://www.redcrossblood.org) and enter sponsor code **AEBU**

**For more information**  
 Contact AEBU at **626•344•7321**



# Հարցազրույց Գոյնների ճարտարապետ՝ Գեղանկարիչ Էդման Այվազեանի հետ

ԱՍՏՏՈՒՐ ԿԻՉԵԼԵԱՆ

Վերջերս ինձ յաջողուեց հարցազրույց ունենալ սփիւռքահայ մեծատարանդ գեղանկարիչ Էդման Այվազեանի հետ, Լոնդոնի իր արհեստանոցում:

Տարիների փորձով գիտեմ որ շատ աւելի հեշտ է հարցազրույց վարել միջակ կարողութեան տէր անձի հետ, քան տաղանդաշատ արուեստագէտի՝ պարզ այն պատճառով որ առաջինը՝ հիմնականում փորձելու է իր չունեցած արժանիքները գովաբանել, իսկ երկրորդը՝ իր տաղանդը թերագնահատել եւ իրեն հասցեագրուած արդար արժեւորումները՝ չափազանցութիւն համարել:

Չգիտեմ ո՞վ է ասել, բայց ո՞վ որ ասել է, ճիշդ է ասել, որ «համեստութիւնն ու մեծութիւնը անբաժան ընկերներ են»:

Էդման Այվազեանին՝ ՄԵՄԱ-ՏԱՌ-ՈՎ մարդուն եւ ՈՍԿԵՏԱՌ-ՈՎ արուեստագէտին՝ որը միաժամանակ սեպհականատէր է համովհոտով անհատականութեան, կարեւոր է ճիշդ բնութագրել, հեռու մնալով քլիշէ դարձած խօսքերից, անշունչ, անբոյր ու անթոյր արտայայտութիւններից: Իմ դժուարութիւնը կայանում է նրանում, որ Այվազեանի յատկութիւններով օժտուած մարդուն եւ արուեստագէտին ճիշդ տարագաւորելը՝ այնքան էլ հեշտ յանձնառութիւն չէ:

Երբ առաջին անգամ հանդիպեցի էդիկին (մինչեւ հիմա էլ իր մտերմները նրան էդիկ են անուանում) աւելի քան քառասուն տարի առաջ, իմ վրայ մեծ տպաւորութիւն թողեց նրա գուարճախօսութիւնը, պարզութիւնն ու համեստութիւնը: Հետագայում, երբ աւելի մօտից ծանօթացայ նրան եւ նրա ստեղծագործութիւններին, զգացի որ բացի տաղանդաւոր արուեստագէտից, գործ ունեւ նաեւ մարդկային արժանիքներով հարուստ մարդու հետ:

Երբ մտնում ես 85ը անց (ծնած 1932 թ.ին), բայց հոգով շահել գեղանկարչի արուեստանոցը, քեզ թւում է թէ մտել ես գոյների կախարդիչ մի աշխարհ...: Հիացմունքով դիտում ես արեւավառ՝ երբեմն էլ աշնանային գոյներ հագած, խորը ներբազմացողութեամբ կեանքի կոչուած գեղանկարներ, գծանկարներ, գեղուկ կանանց գունազեղ կերպարներ, հողագործ բանուորներ, մէկ խօսքով հմայիչ գոյների եւ գծանկարների մի համայնապատկեր, որոնց մեծ մասը կարծես վրձինուած լինի՝ մեր մանրանկարներում օգտագործուած որդան կարմիրով:

Որպէս զգայուն արուեստագէտ, Այվազեանը գիտէ բնութեան հետ մերուելով, նրա արգանդից ծնած գոյների առինքնող գեղեցկութեան հմայքը վերարտադրել իր կախարդական վրձինով:

Երբ նայում ես Այվազեանի ստեղծած տղամարդկանց եւ կանանց նկարներին, անմիջապէս նկատում ես որ արուեստագէտը թափանցել է իր կերպարների ներաշխարհը, զգացել նրանց խինդն ու վիշտը, հոգեկան ապրումները, եւ իր տեսածն ու զգացածը յանձնել պատասաւին, ոչ որպէս լուսանկարիչ, այլ գոյներն ու գիծերը իմաստաւորել գիտցող գեղանկարիչ:


Նախքան հարցազրույցը՝ անհրաժեշտ եմ համարում կենսագրական ամփոփ տեղեկութիւններ հա-

Իրանահայ մեծ նկարիչ Էդման Այվազեանի մահուան տխուր առիթով (25 Մարտ, 2020), որպէս յարգանքի տուրք այս սքանչելի մարդուն, մեծ հայրենասէրին եւ բացառիկ տաղանդով օժտուած արուեստագէտին, կից կը դրկեմ անոր հետ երկու տարի առաջ ունեցած «ԳՈՅՆԵՐՈՒ ԵՄՍԱՐԱՊԵՏ» խորագրուած հարցազրույցս, որ իբրեւ գրքոյկ ալ լոյս տեսաւ հայերէն բնագրով եւ անգլերէն թարգմանութեամբ Մարտ 2018-ին, Լոնտոնի մէջ:

Օգտուելով առիթէն, կ'ուզեմ Կիւզելեան ընտանիքի խորագրաց ցաւակցութիւնները յայտնել Էդմանի հրաշալի տիկնոջ, Թելմային, գաւակներուն եւ համայն Այվազեան ընտանիքին: Էդիկի յիշատակը միշտ վառ պիտի մնայ բոլոր անոնց սրտին ու մտքին մէջ, որոնք զինք ճանչնալու բախտին արժանացած են:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»

ԱՍՏՏՈՒՐ ԿԻՉԵԼԵԱՆ



ղորդել, որոնք կարեւոր են՝ նախ էդման Այվազեանին որպէս նկարիչ ճիշդ գնահատելու, ապա՝ հարցազրույցում նշուած դէպքերի ու անձնաւորութիւնների մասին աւելի յստակ պատկերացում ունենալու համար:

Է. Այվազեանը, սկսած 1948 թ.ից, աւելի քան 70 տարի ստեղծագործել է եւ իր նկարները ցուցադրել բազմաթիւ հաւաքական եւ անհատական ցուցահանդէսներում, Իրանում, Անգլիայում, Միացեալ Նահանգներում, Հայաստանում եւ այլուր:

Դեռ 16 տարեկան պատանի՝ Այվազեանը Թեհրանում մասնակցել է UNESCO-ի կազմակերպած Երիտասարդ Նկարիչների Միջազգային Ցուցահանդէսին եւ շահել մրցանակ:



Այնուհետեւ է. Այվազեանը 1949-1957 տարիներին Թեհրանում մասնակցել է Մշակույթ Միութեան, Ս. Միութեան Մշակութային կենդրոնի, Գարուն Ակումբի, Մեհրեզան Ակումբի, Աբիազ ֆալասի եւ Թեհրան Երկամեայի (Teheran Biennial) կազմակերպած հաւաքական ցուցահանդէսներին:

Այվազեանը Թեհրանում տուել է նաեւ երեք անհատական ցուցահանդէսներ, առաջին երկուսը՝ Իրան-Ամերիկա Ընկերակցութեան հովանաւորութեամբ 1952ին եւ 1955ին, իսկ երրորդը՝ 2010-ին՝ Արուեստի կենդրոն (Art Center) ծանօթ պատկերասրահում, ուր ցուցադրուել է նրա՝ բացի վերացական (abstract) գործերից, նաեւ Պարսկաստանի գիւղերին նուիրուած շուրջ երեսուն նկարներ:

Բացի Իրանից՝ 1984-2016 տարիներին, է. Այվազեանը անհատական ցուցահանդէսներ է տուել Նիւ Եորքի Գորկի Պատկերասրահում (Gorky Gallery), Լոնդոնի Կիւլ-պէնկեան Սրահում, Լոնդոնի Ռոչան Պատկերասրահում (Rochan

Gallery) եւ Երեւանի Նկարիչների Տանը:

Նոյեմբեր 2015-ին, նրա հայաստանեան երկրորդ անհատական ցուցահանդէսը, «Հայրենի Երկրի Գոյները», տեղի է ունեցել Երեւանում, Հայաստանի Ազգային Պետական Պատկերասրահում, նախաձեռնութեամբ Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետութեան Դեսպանութեան Մշակութային կենդրոնի: Նոյն ալը ցուցահանդէսը՝ 2016-ին տեղափոխուել է Իրան եւ ցուցադրուել՝ Թեհրանի Նիսավարան Պալատում, որից յետոյ նաեւ՝ Թեհրանի Արարատ Միութեան սրահում:

1990-ից, է. Այվազեանի նկարները ցուցադրուել են նաեւ հաւաքական ցուցահանդէսներում, Ղրիմում, Միացեալ Նահանգներում,

արժանանալով բոլորի հիացմունքին ու գնահատանքին:

Որպէս ծովանկարիչ (Marine Artists)՝ Այվազեանը Անգլիայում մասնակցել է աւելի քան երեսուն ցուցահանդէսների: Նրա ծովանկարներից գտնուած են Cornwall-ի Մովային Ազգային Թանգարանում (National Maritime Museum):

Սաուդի թագաւորական ընտանիքի պատուէրով՝ 1985-ին, է. Այվազեանը նկարել է Սաուդի թագաւորների եւ իշխանների նկարները, ինչպէս նաեւ՝ «Կեանքը Ս. Արաբիայում՝ 1930-ական թուականներին» նկարաշարը: Դարձեալ թագաւորական ընտանիքի պատուէրով՝ 2001-ին, նա նկարել է իշխան Աբդուլա Բին Աբդու Ազիզ էլ Սաուդ իշխանի դիմանկարը:

Է. Այվազեանը շահել է հետեւեալ մրցանակները.

-Մրցանակ՝ UNESCO-ի Երիտասարդական Միջազգային Ցուցահանդէսում (1948):

-Ա. Մրցանակ՝ Իրանի Ժամանակակից Նկարիչների ցուցահանդէսում (1956):

-Ա. Մրցանակ՝ Իրանը Վենետիկի Երկամեայ (Venice Biennial) Միջազգային Ցուցահանդէսին ներկայացնելու համար Իրանի Մշակույթի Նախարարութեան կազմակերպած մրցույթում (1958):

-Մրցանակ՝ «Սթանլի Գրիմ» (Stanley Grimm Award) Մեծն Բրիտանիայի Իւղանկարիչների Արքայական Հիմնարկի ցուցահանդէսում (1998):

-Մրցանակ՝ «Ուինզոր եւ Նիւթըն» ("Windsor and Newton" Award) Մեծն Բրիտանիայի Իւղանկարիչների Արքայական Հիմնարկի ցուցահանդէսում (2000):

-Մրցանակ՝ "The Worshipful Company of Shipwright's Award") Մեծն Բրիտանիայի Ծովանկարիչների Արքայական Ընկերութեան տարեկան ցուցահանդէսում (2001):

-2015-ին, Հրանուշ Յակոբեանը էդման Այվազեանին պարգեւատրել է ՀՀ Սփիւռքի Նախարարութեան «Արշիլ Գորկի» շքանշանով:

Այվազեանի նկարներից գտնուած են բազմաթիւ պատկերասրահներում, թանգարաններում, հաստատութիւններում եւ անհատական հաւաքածոներում: Նշենք մի քանիսին.

Սուրբ Ղազար վանք, Երեւանի Արամ Խաչատուրեանի անուան Տուն-Թանգարան, Թեհրանի Ս. Սարգիս եւ Նարմակ Եկեղեցիներ, Իրանի Քարիւղի Ազգային Ընկերութեան մուտքի սրահ, Ամերիկայի Նորթրոփ Հիմնարկ, Թեհրանի Արտակ Մանուկեան թանգարան, Հայաստանի Ազգային Պետական Պատկերասրահ, Հայաստանի Ժամանա-



# Հարցազրոյց Գոյների ճարտարապետ՝ Գեղանկարիչ Էդման Այվազեանի հետ

Շարունակուած էջ 12-էն

կակից Արուեստի Թանգարան, Ֆեդոսիայի Յովհաննէս Այվազովսկու անուան Թանգարան, Էւալլն:

Այս յօդուածը նպատակ չունի հանգամանօրէն անդրադառնալու Այվազեանի նկարչական արուեստի հետ առնչուած բոլոր հարցերին: Մեր առաջադրութիւնն է, պարզապէս գրուցել մեծ վարպետի հետ, խօսել նրա կենսագրութեան հետ կապուած յիշարժան դէպքերի եւ դէմքերի մասին:

Ուրեմն խօսքը տանք էդման Այվազեանին:

«Մնուել եմ Թեհրանում: Հայրս մեքենավար էր ունէր իր սեպհական ինքնաշարժը: Այդ տարիներին դա պարուստի լաւ միջոց էր: Այդ ժամանակուայ Թեհրանը շատ փոքր էր: Հայերը հիմնականում ապրում էին քաղաքի երկու ծայրամասերում, հարաւային եւ հիւսիսային Թեհրանում:

Փոքր տարիքից իմ վրայ խորը տպաւորութիւն է թողել մի բան, որի մասին ուզում եմ կարճ պատմել: Այդ ժամանակ Թեհրանում բաւական թուով գաղթականներ կային, որոնք եկել էին Ռուսաստանից, Հայաստանից եւ Կովկասի տարբեր շրջաններից:


Նրանց մէջ կար մի ընտանիք, որի անդամները՝ Մեքայելը, Գուրգէնն ու Ալեքսին դարձան մեր հարեւանները: Նրանք ապրում էին մեր տան կապձ երկու սենեականոց յարկաբաժնում: Մի քայլը տարիքոտ մարդ էր, որը Լենինգրադից շրջանաւարտ նկարիչ էր: Նրանց նիւթական վիճակն այնքան էլ լաւ չէր: Այդ տարիներին, Թեհրանում, երբ նկարչին չէին ծանօտում, նրան աշխատանք չէին տալիս: Յիշում եմ, նրանք մետաքսեայ կտաւի վրայ երեխաների դիմանկարներ էին գծում, իսկ կանայք դրանցից շոր էին կարում: Մեքայելը նման աշխատանքներով մի կերպ պահում էր իր ընտանիքին: Որպէս մարդ՝ նա շատ համեստ էր եւ համբերատար: Այդ ժամանակ ես թէեւ հագիւ 5-6 տարեկան էի, բայց այն տպաւորութիւնը որ նա եւ իր ընտանիքը իմ վրայ թողել են, մինչեւ այսօր չի կորցրել իր ոյժը:

Յաւօք սրտի, հայրս երկար կեանք չունեցաւ: Ինը տարեկան էի, երբ նա մահացաւ: Այդ տարիներից իմ մէջ ծնունց նկարելու սէրը: Դպրոցում, երբ դասագրքիս նկարները չէի հաւանում, դրանք փոխարինում էի իմ գծած նկարներով...:

Այդ շրջանին էր, որ Մանուկ Մարտիրոսի հովանաւորութեամբ ինձ ուղարկեցին Իսպահան, որպէս գիշերօթիկ ուսանող: Մանուկ Մարտիրոսը Պարսկաստանում ծանօթ էր որպէս հայաստանասէր եւ էջմիածնասէր մարդ: Հետագայում իմացայ, որ նա վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի համար պարսիկ վարպետների ձեռքով պատրաստել էր տուել սաղափից կաթողիկոսական մի գեղեցիկ գահ, որը գաղտնի ճանապարհներով հասցրել էր էջմիածին...:

Երբ աւարտեցի Իսպահանի դպրոցը, վերադարձայ Թեհրան: Հօրս մահուանից յետոյ մայրս մեծ դժուարութիւններով էր մեծացնում իր չորս երեխաներին: Նկատի ունենալով այդ պարագան, սկսեցի գնալ նկարիչների մօտ եւ օգնել նրանց, որոնք սինեմայի եւ առեւտրական գանազան ապրանքների գովազդներ էին նկարում: Նրանք ինձ

շատ քիչ փող էին վճարում, որը տալիս էի մօրս: Մայրս ուրիշների համար կար անելով մի կերպ հոգում էր ընտանիքի կարիքները: Կեանքը հեշտ չէր, բայց ինձ առաջարկուած աշխատանքները ես անում էի սիրով, դրա համար էլ երբեք ձանձրոյթ չեմ զգացել կեանքում: Թէեւ սիրում էի իմ ընկերներին եւ յաճախ լինում նրանց հետ, բայց զգում էի որ ես տարբեր հետաքրքրութիւն, տարբեր հեռանկարներ, տարբեր պարտաւորութիւններ ունէի, մի հանգամանք՝ որը ինձ մղում էր ուսման եւ աշխատանքի: Թէ՛ սովորում էի, թէ՛ աշխատում:



Այդ տարիներին Թեհրանում ապրում էր Սոեհլի անունով մի այտուի պարսիկ նկարիչ, որի կինը հայ էր: Նա աշակերտել էր Քամալ Ալ Մուլլը համբաւաւոր պարսիկ նկարչին (1847-1940): Սոեհլուն ինձ ծանօթացրել էր իր շատ մտերիմ ընկերը, իրանահայ բանաստեղծ-նկարիչ Դեւը (Մարգար Ղարաբէկեան), որը նոյնպէս աշակերտել էր Քամալ Ալ Մուլլին: Սոեհլին պատահած ինձ կանչում էր իրեն օգնելու: Նա պատուէրներ էր ստանում եւրոպացի նկարիչներից card postal-ներ պատրաստելու: Այդ աշխատանքը ինձ համար լաւ եկամտուտի աղբիւր էր: Նա ինձ ուրիշ գործ էլ էր տալիս: Այնպէս որ, երբ գիշերը տուն էի գալիս, գրպանումս բաւական փող էր լինում:

Մի առիթով Սոեհլին ինձ հարցրեց.

«Պալատում քեզ համար մի գործ կայ, կ'անե՞ս»:

Մտածեցի որ Սոեհլու առաջարկը լաւ փող վաստակելու միջոց կարող էր լինել:

«Ի՞նչ է հարկաւոր անել», հարցրի:

«Դռների վրայ բարակ գծեր պէտք է քաշես եւ անկիւններին փոքր ծաղիկներ նկարես», ասեց Սոեհլին:

Համաձայնեցի, բայց խնդրեցի նախ մի հատ պատրաստել, որպէս նմոյշ եւ եթէ հաւանեն, շարունակել աշխատանքը: Նմոյշն արժանացաւ պալատի հաւանութեան:

Այդ տարիներին լաւ բանուորի օրավարձը երկու թուման էր: Սոեհլին թելադրեց երեսուն թուման պահանջել:

Հարցրի թէ այդ գումարից ինք պահանջ ունէ՞ր, որին Սոեհլին բացասական պատասխանեց:

Ահա այդ ժամանակ էր որ ես առաջին անգամ Պարսկաստանի

թագաւորին հանդիպեցի անսովոր պայմաններում: Աշխատում էի, մէկ էլ նայեմ մէկը փղաւելով գալիս է իմ ուղղութեամբ. երբ մօտեցաւ ինձ, հարցրեց.

«Էդ երեսուն թումանանոց վարպետն ո՞ւր է»:

Երբ իմացաւ որ ես եմ, զարմացած ուշադիր նայեց ինձ, գլուխը շարժեց, «խօսք չունեմ» ասեց, ու արագ հեռացաւ...:

Երեք օր աշխատել էի արդէն: Ստացած մեծ աշխատավարձիս գումարը մի լաւ գործ արած լինելու գոհունակութիւնը մեծ բաւարարութիւն պատճառեց ինձ»:

Ա.Կ. Այդ ժամանակ քանի՞



տարեկան էիր:

Է.Ա. Տասն չորս. հասակս էլ մի բան չէր:

Ա.Կ. հասակդ հիմի էլ մի բան չէ...: Այս կապակցութեամբ մի բան պատմեմ քեզ, էդիկ: Գեւորգ էմինը, վարդգէս Պետրոսեանն ու ես քայլում ենք Երեւանում 1968ին, երբ հրաւիրուել էի Երեւանի 2750ամեակի տօնակատարութիւններին: Ես երկուսի մէջտեղում էի: Էմինը իրեն յատուկ շարաճիճի ժպիտով նայեց ինձ ու հարցրեց.

«Զսակացայ Ասատուր, այսօր ինչու՞ այդքան ուրախ ես»:

«Ուրախ եմ, ասեցի, որովհետեւ միշտ չէ որ ինձ բախտ է վիճակուած քայլել հասակով ինձնից աւելի կարճ երկու անուանի գրողների հետ...: Իմ հասակն էլ մի բան չէ, էդիկ, բայց միութարոււմ եմ այն իրողութեամբ որ էմինը, վարդգէսն ու Հրաչեայ Ղափլանեանը ինձնից աւելի կարճ են հասակով...:

Ա.Կ. Պալատի համար կատարած աշխատանքը լաւ հետեւանքներ ունեցա՞ւ:

Է.Ա. Բոլոր նրանք, ովքեր լսում էին այդ մասին, ինձ աշխատանք էին առաջարկում:

Ա.Կ. Իսպահանից յետոյ ուսումը որտե՞ղ շարունակեցիր:

Է.Ա. Միջնակարգ ուսումս ստացել եմ Թեհրանի Թամազոն դպրոցում, ուր կարգ-կանոն հասկացողութիւնը գոյութիւն չունէր: Մեր դասարանում թաքսու վարորդ անգամ կար...: Դպրոցում աշակերտներին թոյլատրուած էր նոյնիսկ ծխել: Աշակերտները թէ՛ աշխատում էին, թէ՛ սովորում:

Իսլամական յեղափոխութիւնից առաջ, Թեհրանում կար մի պարտադիր միջոցառում. երբ թագաւորն իր ճանապարհորդութիւններից վերադառնում էր մայրաքաղաք, փողոցներում «Բարի Գալուստ»ի կամարներ էին սարքում: Մի առիթով այդ աշխատանքն աւելի լաւ կազմակերպուած տեսնելու նպատակով, պատասխանատուները կամարաշինութեան պայմանագիրը տուել էին Թալբերք անունով բելգիացի մի նկարչի: Թալբերքը եկել էր մեր դպրոցը, նկարելու ունակութիւն ունեցող եւ քիչ վարձատրութեամբ աշխատելու պատրաստ մի ուսանող գտնելու նպատակով: Մեր տեսուչը, Պրն. Սալբըր, ինձ էր յանձնարարել:

Բացի կամարաշինութիւնից, բելգիացի նկարչին սկսեցի օգնել նաեւ ուրիշ գործերում: Յաւելեալ աշխատանքի պէտք ունէի, քանի որ ինձնից փոքր երկու եղբայրներս եւ քոյրս մեծանում էին եւ ընտանիքի կարիքը շատանում էր:

Լաւ վարձատրութեամբ սկսեցի աշխատել նաեւ թերթերի գովազդների բաժնում: Ահա այդ շրջանին էր որ Սոեհլին ինձ ծանօթացրեց Պովմաս Թովմասեանին, որին Պապիկ էին անուանում, իր բարեսիրական արարքների համար: Պապիկի եղբայրը աղի արտադրութիւն ունէր եւ նրան հարկաւոր էր մի գովազդ, որը ցոյց տար աղամանից աղի սահուն թափուելը: Երբ Պապիկը աղի հետ կապուած իմ գովազդը տեսաւ, խոստացաւ ինձ ուրիշ գործեր եւս տալ: Մի առիթով նա ինձ ծանօթացրեց Պարսկաստան նոր ժամանած էլմոյ Փալես անունով իտալացի ճարտարապետի հետ, որը ազնիւ ու շնորհալի մարդ էր: Նա իմ գծագրելու եւ նկարելու ոճը շատ էր հաւանել: Էլմոն մի առիթով ասեց ինձ.

«Գիտեմ որ ուզում ես ճարտարապետ դառնալ. ես քո աշխատանքի կարիքն ունեմ. դու ինձ օգնիր, ես էլ քեզ կ'օգնեմ, որպէսզի ճարտարապետութեան հիմնախնդիրներին ծանօթանաս»:

Շուրջ երեք տարի միասին աշխատելուց յետոյ, նրա խորհրդով մեկնեցի Իտալիա:

(Շարունակելի)

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՍԻՏԻԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸՍՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸՍՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**(626) 797-7680**



### Կինը Նուաճելու ՍոցիալաԾ Միջոցներ (Յատուկ՝ Տղամարդոց Համար)



1) Եղէք անկեղծ: Չարժէ ապաւինիլ յամառութեան ու ճնշումներուն, ատով միաւորներ չէք վաստակիր: Անընդհատ կրկնելով, որ ան զեղեցիկ է, կամ ալ ամբողջ օրը անոր հեռաձայնելով, դուք անոր ուշադրութիւնը չէք գրաւեր: Եթէ դուք, հակառակը, անմատչելի թուիք կնոջ ու ձեւացնէք, թէ չէք նկատեր զինք, դարձեալ դժուար թէ յաջողութեան հասնիք: Թէ՛ մէկը, թէ՛ միւսը ընդամէնը անհատնութեան դրսեւորումներ են:

Ատոր փոխարէն եղէք անկեղծ: Եղէք այնպիսին, ինչպէս էք: Մի պահէք ձեզի այնպէս, կարծես կինը որեւէ առարկայ է, որ դուք կը փորձէք նուաճել: Անոր հետ վարուեցէք, ինչպէս կնոջ հետ, որուն յարգանքին կը փորձէք արժանանալ: Փորձեցէք աւելի լաւ հասկնալ զինք: Հետաքրքրուեցէք անոր գործերով, նպատակներով: Պատասխանեցէք անոր զանգերուն: Եթէ որեւէ բան կ'ընէք անոր համար՝ սրտանց ըրէք: Եթէ ան կը հետաքրքրէ ձեզի՝ սորվեցէք գնահատել անոր կեանքի բոլոր կողմերը: Իսկ ան ալ, իր հերթին, պիտի սորվի գնահատել, յարգել, վստահիլ ձեզի:

2) Ինքնավստահ եղէք: Վստահութիւն ձեր խօսքին մէջ, իսկ աւելի շատ՝ գործողութիւններու մէջ: Ան պիտի զգայ այդ վստահութիւնը ձեր ձայնին, աչքերուն, շարժումներուն մէջ: Դուք ձեր վստահութեամբ կարծես անոր կը յայտնէք «ես այն տղամարդն եմ, որ քեզի պէտք է: Ես մտադիր եմ հասնելու այն բանին, որ դուն իմս դառնաս»: Ան անպայման պիտի զգայ ատիկա, առանց բառերու:

Եթէ ձեզ տանջէք անվստահութեամբ ու խանդով, դուք ընդամէնը պիտի վանէք զինք: Պիտի զրկուիք առողջ շարաբերութիւններու բոլոր հնարաւորութիւններէն: Ինքնավստահ եղէք ու օգտուեցէք անոր սիրտը գրաւելու ձեր հնարաւորութիւններէն:

3) Եղէք ինքնաբերական: Ինչքան կը մեծնանք այդքան աւելի ծրագրուած ու համակարգուած կը դառնայ մեր կեանքը: Մեր իւրաքանչիւր օրը ծրագրուած է ու երբեք ժամանակը չի բաւականացներ ամէն ինչին: Քիչ մը շեղիք ձեր ծրագրերէն, կրցէք ինքնաբերական ըլլալ:

Պէտք է ծրագրել հանդիպումը՝ պարզապէս հեռաձայնեցէք անոր ու առաջարկեցէք, օրինակ, լեռ բարձրանալ ու այնտեղ դիմաւորել արշալոյսը, կամ ալ քաղաքին մէջ զբօսնել զիշերը, հրաւիրեցէք զինք թատրոն կամ

համերգի: Մեր շուրջը ամբողջ աշխարհ մը կայ, որ կարելի է բացայայտել միասին առանց ծրագրելու: Կեանքի լաւագոյն պահերը ինքնաբերական են, ու մենք երբեք անոնց մասին նախօրօք չենք գիտեր: Իսկ ծրագրուած ժամադրութիւնները քիչ մը ձանձրալի են, եղէք աւելի իւրօրինակ:

4) Յարգանք դրսեւորեցէք: Տղամարդիկ երբեմն կը մոռնան, որ կնոջ հետ կարելի է վարուիլ այնպէս, ինչպէս ընկերոջ հետ: Կինը արժանի է այլ վերաբերմունքի: Կանոն առաջին՝ երբեք մի վիճիք անոր հետ, մի ըսէք վիրաւորական բառեր, ատիկա զգուշ լի է: Միթէ՞ կը փափաքէիք, որ հետագային ոեւէ մէկը այդպէս խօսէր ձեր աղջկան հետ:

Անոր առջեւ բացէք դուռը, օգնեցէք նստելու սեղանին շուրջ, աթոռը առաջ բերելով: Յոյց տուէք, որ ան ձեզի համար կարեւոր է:


5) Հետաքրքրեցէք զինք: Կանանց կը գրաւեն կիրթ, խօսքին լաւ տիրապետող տղամարդիկ: Միտքը ամենահզօր գէնքն է տղամարդոց գինանոցին: Ձգտեցէք ամէն օր որեւէ նոր բան ուսումնասիրել, մանաւանդ այն բնագաւառին մէջ, որ կը հետաքրքրէ կինը: Ձեր գրոյցները դարձուցէք բովանդակալի: Խօսեցէք անոր հետ այն ամէնի մասին, որ ձեզի կը հետաքրքրէ:

Բնականաբար դուք կրնաք կինը գրաւել ձեր արտաքինով կամ դրամատանային հաշիւով, բայց անոր հոգիին տիրանալ դուք պիտի կարենաք միայն ձեր անձնային յատկանիշերով:

6) Համբերատար եղէք: Տղամարդու համբերութիւնը կը գրաւէ կինը: Դուք ձեր համբերութեամբ կարծես անոր կը հասկցնէք՝ ես պատրաստ եմ սպասելու, քանի որ դուք աժանի էք ատոր: Կարեւոր է մնալ անկեղծ ու ազնիւ, անոր հանդէպ յարգանք դրսեւորել, գնահատել իբրեւ կին: Այդ պարագային դուք հնարաւոր է ստանաք երկար սպասուած մրցանակը: Իսկ եթէ ոչ՝ ուրեմն այդպէս ալ պէտք է ըլլար: Կեանքի իւրաքանչիւր պահը փորձառութիւն է, որմէ պէտք է հրաժարիլ:

7) Եղէք առնական: Աշխարհի մէջ բազմաթիւ տղամարդիկ կան, որոնք կ'ապրին առանց կիրքի ու նպատակի: Անոնք չեն ուզեր խոցուած ըլլալ ու ատոր համար ալ կը վախնան անկեղծանալէ կնոջ հետ: Անոնք կը նուաճեն կնոջ սիրտը, իսկ յետոյ կը լքեն զինք, քանի որ կը վախնան լքուած ըլլալէ: Իրականութեան մէջ նման վարքագիծը ձեզի ոչ թէ առնական

### Չապէլ Մանկասարեան Ամերիկեան Համար Հարժանկարի Առաջին Դերասանուհին



20-րդ դարու սկիզբը Պրոտոնէյի թատերական բեմահարթակներուն վրայ փայլող Ֆլորա Չապէլը ծնած է 1880-ին, Կ. Պոլիս, ամերիկեան «Ռոպերթ» քոլէճի շրջանաւարտ, հետագային ճանչցուած ամերիկահայ գրող, պատմաբան, աստուածաբան եւ փիլիսոփայ Մանկասար Մանկասարեանի եւ Ագապի Ալթունեանի ընտանիքին մէջ:

Հագիւ փրկուելով Օսմանեան կայսրութեան կազմակերպուած հայերու ջարդերէն՝ անոնց ընտանիքը կը հանգրուանէ Շիքակոյի մէջ:

Չապէլի միակ երագանքն էր մեծ բեմի դերասանուհի դառնալը: Եւ 19 տարեկանին, դժուարութեամբ ստանալով ծնողներուն համաձայնութիւնը, ան համարձակ որոշում կը կայացնէ մեկնելու Նիւ Եորք՝ բաւաջիւրէն նուաճելու Պրոտոնէյը:

Դերասանական եւ երաժշտական բացառիկ տաղանդը, զեղեցիկ սոփրանօն, արեւելեան ինքնատիպ արտաքինը եւ գումարած եռանդուն նպատակաուղղուածութիւնը շուտով յաջողութիւն կը բերեն երիտասարդ աղջկան պրոտոնէյեան շարք մը

ներկայացումներու մէջ: 1905-ին Ֆլորա Չապէլ բեմական անունով կատակերգական ժանրի արդէն ճանչցուած դերասանուհին կ'ամուսնանայ Պրոտոնէյի musical-ներու ուշագրաւ դէմք Ռայմոնտ Հիչքոքի հետ: Ամուսնական գոյգը միաժամանակ ե'ւ յաջողութեամբ կը խաղար միասին թատրոնի մէջ, ե'ւ համատեղ բեմադրութիւններ կ'իրականացնէր:

Ֆլորա Չապէլ Մանկասարեան-Հիչքոքը դարձաւ նաեւ առաջին կին դերասանուհիներէն մէկը ամերիկեան համր շարժանկարի մէջ՝ խաղալով շարք մը կատակերգական ֆիլմերու մէջ: Անոր առաջին ֆիլմերն էին 1915-ին նկարահանուած «Օղակապոչ Ռինգեղջիւր» եւ «Գիւղական Վիճաբանութիւն» ֆիլմերը: Յատկապէս մեծ յաջողութիւն ունեցաւ 1916-ին նկարահանուած «Կարմիր Այրի» շարժանկարը: Այսպիսով, Ֆլորա Չապէլը փաստօրէն կը հանդիսանայ նաեւ առաջին հայ շարժանկարի դերասանուհիներէն մէկը:

Մահացած է 1968-ին, Նիւ Եորքի մէջ:

### Կալկաթայի Գեմարանի Սաները Երեւան Տեղափոխուած են



31 Մարտին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի նախաձեռնութեամբ եւ Ֆինանսաւորմամբ, Պարետատան եւ Արտաքին Գործոց Նախարարութեան համակարգմամբ, կազմակերպուեցաւ յատուկ չուրթ՝ իրականացնելու Հնդկաստանի մէջ գործող Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի 68 սաներու եւ անոնց ուսուցիչներու Հայաստան փոխադրումը: Այս մասին

կը տեղեկացնէ Հայկական միասնական տեղեկատուական կեդրոնը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի հովանիի տակ Հնդկաստանի մէջ արդէն երկու հարիւրամեակ գործող Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանը հանրակրթական դպրոց է, ուր կ'ուսանին աշակերտներ հիմնականօրէն Հայաստանէն, Իրանէն, Սուրիայէն, Իրաքէն եւ այլ երկիրներէ:

կը դարձնէ, այլ թուլամորթ: Ատոր համար ալ, եթէ կ'ուզէք նուաճել կինը, եթէ ան ձեզի համար կարեւոր է, մի վախնաք, ցոյց տուէք, որ կը գնահատէք զինք, կը յարգէք,

կ'աջակցիք: Կարեւորը, որ ձեր կողքին ան ինքզինք առանձնապատուկ զգայ: Այդ պարագային հաւանական է, որ ան խենթի պէս պիտի սիրահարի ձեզի:



### Վճռականութիւնը Անպարտելի

Ռ. ԿՈՐԻԻՆ

Աննախադէպ իրականութեան դէմ յանդիման ենք կանգնած, արդէն շուրջ երկու ամիս է աշխարհը ահապահալի տագնապի մէջ է, այս աննախընթաց համաճարակը (Covid 19), փակել է դուռ ու դարբաս ընտանիքներին բանտարկելով տներում: Մանրադիտակով հազիւ տեսանելի այս միկրովայրոսը աշխարհի բնական կեանքը ալեկոծել, խուճապ ու տագնապ է առաջացրել՝ մեկուսացում, ինքնագուպում խրախճանքներից, հանդիսութիւններից եւ շփում հանդիպումներից: Անցեալում պանդեմիաներ եղել են մարդկային գոհեր խլելով, բայց ոչ սրա յանգոյնը, այս մէկը տարբեր է իր տարողութեամբ եւ տարածուելու ուժգնութեամբ, այնպէս որ աշխարհը լուրջ հետամուտ է գայն չէզոքացնել, քանզի անուշադրութիւնը մեծ աղէտների հետեւանք կ'ունենայ, ինչպէս արդէն բաւական մեծ թւով մարդիկ են գոհուել: Աշխարհի կարգ ու սարքը խառնուել եւ սահմանները փակուել են: Աշխարհի երկրներից մէկն էլ մեր պաշտելի հայրենիքն է եւ այն բոլոր երկրները ուր ապրում են մեր քոյր ու եղբայրները անվերապահ նկատառումներով պայքարում են այս մարդակեր եւ անտես հրէշի դէմ: Անշուշտ պէտք է վհատել մեր աշուղ Զիւլանի հանճարեղ խօսքով՝ սա էլ կը գայ ու կերթայ, այն ինչ կարեւոր է առողջապահութեան նուիրեալների խորհուրդներին ու յորդորներին ունկնդիր՝ խաղաղ հոգով ու սրտով, առանց խուճապի մատնուելով շարունակենք մեր կեանքը զսպուածութեամբ մինչեւ աներեւոյթ սաղայէլի վերջը տրուի:

Այս պայմաններում, եկող ապրիլեան օրերին ընդառաջ ենք գնալու եւ տօնելու սրբ. Զատիկը եւ ոգեկոչելու մեր Բիւրաւոր Նահատակների յիշատակը: Անտարակոյս կը նշենք տօնը զգուշաւորութեամբ մեր բնակարաններից ներս եւ կ'ոգեկոչենք մեր ազգի ցեղասպանութեան մէկ ու կէս միլիոնից աւելի մեր անմեղ գոհերի սրբ. յիշատակը հաստատակամ մեր պահանջատիրութեան պայքարի մէջ մեր ձայնը լսելի դարձնելով լրատուական ցանցերով եւ հեռուստատեսութեամբ:

Գալով մեր գատակական տօնին, ինչպէս գիտենք Յիսուս-Քրիստոսի Հրաշափառ Յարութեան տօնն է, որին մենք հայերս Սրբ. Զատիկ ենք կոչում, որը նշանակում է՝ ազատում, անցում, փրկութիւն... քրիստոնեայ աշխարհը մեծ ուրախութեամբ է տօնում Յիսուսի Յարութիւնը, որն է՝ յաղթանակ մահուան դէմ: Սրբ. Զատիկը մեր կրօնական մեծ տօներից է, զարնան եղանակին զուգընթաց, երբ ձմեռը հալուող ձիւնների պէս քաշուում է դէպի սպիտակափառ փայլատակող զազաթները գարուն է գալիս, նոր կեանք, ընձիւղուած բնութիւն? կանաչութեամբ ծաղկածիծաղ զգեստով: Սրբ. Զատիկը ժողովրդականացած եւ սիրուած տօներից է՝ խրախճանքներով եւ իւրաքանչիւր սովորութիւններով, ինչպէս՝ ձու ներկելը, ձուախաղը եւ այլ աւանդութիւններ:

Այս տօնը մեզ խորհել է տալիս, որ այս թագաժահրախտն (Corona Virus) էլ աշխարհի գիտնականների միջոցով պատուաստը կը եաշտնաբերուի եւ վերջ կը տրուի մտավախութիւններին, բոլորիս ակնկալիքն է շուտափոյթ կասեցում, որպէսզի մարդկութիւնը ձեռքազատուի այս մահաբեր համաճարակից:

Այդ առումով մտահոգութիւնները զգալի են, սակայն կեանքը շարունակուում է բարու եւ սիրոյ ցանկութիւններով:

### Յեղափոխական Ժիրայրը

Շարունակուած էջ 6-էն

Եօզկատի իշխանութեան: 12 օրուան դատավարութենէն ետք Ժիրայր կը մահանայ կախաղանի վրայ, 24-25 Մարտ 1894 թուականին, Եօզկատի մէջ: Իր մարմինը շրջան մը զանազան ազգայիններու տուններու բակին մէջ թաղուելէ ետք, 1908 թուականին Օսմանեան Սահմանադրութենէն ետք անոր մարմինը կը թաղուի Եօզկատի Ս. Աստուածածին եկեղեցու բակը:

Օսմանեան Սահմանադրութենէն ետք Ժիրայրը համասօմանեան իմաստով կը դառնայ համիտեան բռնապետութեան դէմ պայքարի դրօշը պարգած եւ այդ ճամբուն վրայ նահատակուած առաջին հերոսներէն մին:

Երբ կը կարդայի Ժիրայր յեղափոխականի կեանքի պատմութիւնը, աչքիս առջեւէն տողանցեցին անցնող վերջին 150 տարուան ընթացքին հայ ժողովուրդին ապրած անկումային ու վերելքի տարիները: 1850-1915 շրջանի Հայաստան երկրի ազատագրութեան պայքարները: 1915-1923 Հայոց Ցեղասպանութիւն, Արեւմտեան Հայաստանի կորուստ, 1.500.000 մարդկային գոհերով: 1918-ին 10.000 քառ. քլմ. Արեւելեան Հայաստանի տարածութեան վրայ հայկական առաջին անկախ հանրապետութիւն, 750.000 բնակչութեամբ, հազար տարուան ընդհատումէն ետք: Ապա 1920-1990 եօթանասուն տարուան

սովետական ժամանակաշրջան: 29.000 քառ. քլմ. տարածութեան վրայ ժողովուրդին թիւը 1990-ին կը հասնէր շուրջ երեք միլիոնի:

Եօթանասուն տարուան ընթացքին Հայաստանի մէջ զարգացաւ ուսում, գիտութիւն, գրականութիւն, արուեստներ, քաղաքաշինութիւն, երեւանը ոչինչէն դարձաւ շրջանի գեղեցկագոյն քաղաքներէն մին: Ապա 1991-ին հռչակուեցաւ հայկական երրորդ հանրապետութիւնը: Այս շրջանին էր որ տեղի ունեցաւ, երկար պայքարէ ետք, Արցախի նահանգի ազատագրումը եւ անկախութիւնը, 10.000 քառ. քլմ. տարածութեամբ:

Այսօր հայկական պետութիւնը ամէն ջանք կ'ընէ զարգացած պետութիւններու շարքին դասուելու համար:

1915-ի Ցեղասպանութենէն ետք հայութեան ողջ մնացած մէկ մասը ցրուեցաւ աշխարհի չորս կողմը, ստեղծելով հայկական սփիւռք հասկացութիւնը: Ներկայիս զանազան երկրներու մէջ ունինք հայկական գաղութներ իրենց եկեղեցիներով, դպրոցներով, ակումբներով, պատմական կուսակցութիւններով, միութիւններով: Հայութեան թիւը հայկական սփիւռքի մէջ կը հաշուէ մօտ 7.000.000:

Այսօր մենք կը դիմաւորենք գալիք օրերը ու տարիները այն հաւատքով՝ որ ապագան Հայաստանի եւ հայութեան բարօրութիւն պիտի բերէ:

### Կորսուած Զնարաւորութիւններ

Շարունակուած էջ 11-էն

նիքի համար լման տարի մը ամսական 500 տոլար դրկուած է:

Զերմօրէն կը շնորհաւորենք Անուշ Պեժանեանը այս խիստ շահեկան աշխատանքին համար եւ իրաքահայերու նուիրուած այս

աւարտաթէզի եւ ուսումնասիրութիւնը ընտրելու համար, մաղթելով իրեն նորանոր հրատարակութիւններ:

Յ.Գ.  
Գիրքէն օրինակ մը ունենալու համար կարելի է դիմել հեղինակին՝ anush.bezhanyan@gmail.com

### Սերժ Սարգսեանը Կասի

Շարունակուած էջ 2-էն

յայտարարելով, որ ապրիլեան քառօրային զանգով կասեցուել է հայկական գրոհը: Նա նկատի ունի ի հարկէ Մոսկուայում գլխաւոր շտաբերի պետերի մակարդակով պայմանաւորուած զինադադարը, որի առնչութեամբ էլ մի բաւականին տարօրինակ յայտարարութիւն էր արել Սերժ Սարգսեանը: 2016 թուականին Դմիտրի Կիսելյովին տուած հարցազրոյցում նա խօսելով այդ պայմանաւորութեան մասին նշել էր, թէ չի տիրապետում այդ հանդիպման մանրամասներին: Ինչ համատեքստով էլ ասուած լինի այդ խօսքը, աներկբայ է, որ առնուազն տարօրինակ է, երբ գերագոյն գլխաւոր հրամանատարը նշում է, որ մանրամասնօրէն չէր տիրապետում պատերազմի օրերին իր գլխաւոր շտաբի պետի եւ հակառակորդի շտաբի պետի բանակցութեան, հրադադարի մասին պայմանաւորութեան մանրամասներին:

Եուրի Նաչատուրովը Սերժ Սարգսեանին չէր փոխանցել այդ մանրամասները, թէ՛ դրանք այն-

պիսին էին, որ Սարգսեանի համար աւելի նպատակաշարժար էր աւել, թէ չի տիրապետում դրանց, քան դրանց համար ստանձնել քաղաքական պատասխանատուութիւն: Թէ՛ Սերժ Սարգսեանն ակնարկում էր, որ Եուրի Նաչատուրովը լինելով Հայաստանի գլխաւոր շտաբի պետ, գործնականում աւելի շատ մոսկովեան տիրոջութեամբ էր գործում, քան հայաստանեան շահերի: Ըստ երեւույթին, այդ ակնարկով Սերժ Սարգսեանը Կիսելյովի հետ հարդորմանը պարզապէս պատերազմի համար պատասխանատուութիւնը դնում էր Մոսկուայի վրայ, հերթական անգամ, քանի որ ապրիլեանից յետոյ նա եւս երկու անգամ բաւականին թափանցիկ ակնարկ է արել այդ կապակցութեամբ:

Կը գնայ Սերժ Սարգսեանն ապրիլեան քառօրեայ պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող յանձնաժողով: Կամ, աւելի շուտ, հետաքրքրում են յանձնաժողովին հէնց այդ՝ պատերազմի բռնկման քաղաքական կամ աշխարհաքաղաքական մանրամասները: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

# ՄԱՍԻՍ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----



**SYRIAN ARMENIAN RELIEF FUND**

**Զօրացիկը**  
**Օժանդակելը**  
**Փրկելը**

www.syrianarmenianreliefund.org

Syrian Armenian Relief Fund  
P. O. Box 1948  
Glendale, CA 91209-1948







# ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ ՊԱՐԶ Է ԵՒ 9 ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՐՑԱԽՈՅԶ

ՀԱՍԱՅՆՔՆԵՐԸ ԿԱՐԵՒՈՐ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԷՔ  
 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ԿԱՐԵՒՈՐ ԵՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻՆ  
 ԱՄԷՆ ԱՆՁ ԿԱՐԵՒՈՐ Է ԱՅՍՈՐ



[CaliforniaCensus.org](https://CaliforniaCensus.org)